



Սիսու

ՅՈՒՆԻՉԱՐ — ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻՒ 1 — 2



Խթ. ՏՈՐՏՈՉԱՆ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱԼԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐՔ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐքութեան

1975

Յունուար - Փետրուար

Թիւ 1 - 2

1975

January — February

No. 1 - 2

SION

VOL. 49

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY

OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem

Editor-in-chief: Archbp. Shahe Ajamian Editor: Ara Kalaydjian



St. James Press

Jerusalem



ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐք ՅՈՐ ՇՆՇԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Բ Ե Թ Ղ Ե Հ Է Մ Ի Ս Ս Ի Բ Բ Ա Ց Ր Ե Ն

ՀԱՅՈՒՅՈՒՆ - ԱՐԱՐ ՀԱՅ

Ժ Ո Ղ Ո Վ Ո Ւ Ր Դ Հ Ա Ց Ո Ց

ՈՐ ՅԵՐՈՒՍԱՂԵՄ, Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Ի ՍՓԻՒՐՈՍ ԱՇԽԱԲՈՀԻ

ՄԱՐԱՐՈՒՄԱՄԱԳ ՃԱՐԱՐ ՃԱՐԱՋՈՂԻ

Մեր Տիրոջ Սուրբ Ծննդեան այս խորհրդաւոր գիշերուան մէջ,
նորէն կը լեցուինք սիրոյ, Յոյսի և ուժի յաւերժական ժայթով,
որովհետև Աստուածայայտնութեան խորհուրդը թեաւոր վերել-
ենով մը կը հանէ զմեզ երկրէն երկինք, հանդիսատես ընելու մարմ-
նով երկցող Աստուծոյ գօրութեան:

Ունայն արտայայտութիւն մը չէ «այսօր երկիրս երկինք եղեն»
բացայայտութիւնը, զոր սրբազն երգը կ'արձագանգէ ամէն տարի
մեր Տիրոջ Ծննդեան առիթով։ Մարդուն կեանքը շնորհիւ այդ
Յայտնութեան՝ նոր նշանակութիւն կ'ստանար։

Ծնունդը սրտառուչ և գեղեցիկ դրուագ մը չէ միայն, մին ա-
նոնցմէ՝ որոնք յանախ յուզիչ և մեծ յիշատակներով կը հարստա-
ցնեն կեանքը, այլ սկիզբը նոր կարգի մը՝ մարդկային պատմու-
թեան մէջ։ Մարդ կրնայ մնալ նոյն կաւէ կանթեղը, հողազանգր-
ւած իրականութեամբ, թշուառութեամբ և վշտով առլի, բայց յոյ-
սին բերկրանենվը յաւետ շողափայլ։

Յիսուսի ծնունդը մարդուն և Աստուծոյ երջանիկ հանդիպման
տօնն է, ոսկի օղակը երկնիքի և երկրի։ Մանուկը որ կու գար իրեն
իբրև օրօրոց ընտրելու բովանդակ աշխարհը, մարմնացած սէրն
էր, աշխարհը տաքցնող հոգին, որ կը բանար երկնիքին սիրտը և
մարդուն արգանդը, սիանչելի և նոր խորհուրդով մը։

Աշխարհը պէտք ունիէր այս գիշեր մարմին առնող այդ Սուրբ
Հոգիին, որ կրակի պիտի վերածէր մեր կաւը, պղտոր և գունատ
մեր խորհուրդներուն պարզմելու ստեղծումի հրաշքը։ Հոգին որ
չի գար մեզի այս աշխարհի ուժերէն, որ յաւերժական ժայթով ու
բխումն է լոյսի և սիրոյ, որ մեզի կը բերէ հաւատիքը թէ մար-
դուն տրուած է այլիս իր կեանքը այլակերպելու, պայծառակեր-
պելու աստուածայինին մէջ, և զայն տանելու յաւերժին։

Գիտեմ թէ դուն կը հաւատաս, հաւատացած ես միշտ, ժողո-
վուրդ Հայոց, արդարութեան, սիրոյ, խաղաղութեան և անոնց

փրկարար և անկորնչելի փառքին: Քու պատմութիւնը արհազեղ և հսկայամարտ ֆերուածն է այդ խոյանքին: Դարեր շարունակ արին և երազ իրք սրտայոյգ պատգամներ շողացին վառ ի վառ քու զաւակներուդ ողբերգութեան վրայ, բայց դուն կրցար պահել քու հաւատքդ, որովհետև գիտցար հաւատալ Բերդեհեմի խորհուրդին և ամէն տարի մանկացեալ Աստուծոյ հետ կրցար մայրացնել քու հոգիդ:

Խ'նչ փոյք զառանցամիքը մարդերու, շառաչիւնը կործանումներու, պաշտամունիքը ուժին և մամոնային: Մենք կը հաւատանք որ իր տիեզերական սէրը, ցանուած մարդոց հոգիներուն մէջ, կ'անի և կը մեծնայ ամէն օր, ըլլալու հսկայ ծառը եղբայրութեան, իր հովանին ներքե առնելու ամրող մարդկութիւնը՝ համաձայն իր պատգամին:

Խաղաղութեան իդաերու և ռազմաշունչ կիրքի խառնուրդ մըն է կեանիքը, և ատոր համար քերես գեղեցիկ: Բարիին ու չարին հակամարտութեան հանդէսն է անիկա, ուր արդարութիւնը իր ուժը կը փորձէ ամէն քայլափոխին, հակառակ իր առջև ցցուող արգելքերուն:

Այս ըմբռնումին առջևն է որ կ'աղուորնայ կռիւին զաղափարը, սուանց աղարտելու խաղաղութեան սրբութիւնը: Սակայն ատոր համար կարևոր է որ մարդիկ կարենան հոգեկան ոլորտի մը մէջ փոխադրել զայն, բարոյական պայքարի մը վերածելով պատերազմի կիրքը: Առավեսդին բացատրութեամբ «քարւոք պատերազմ»ի ծրագիրն է որ պէտք է իրազործուի հոն ամէն վայրկեան: Յամբ բայց ամուր զնացեով մարդկութիւնը դէպի անարին պատերազմ, այսինքն կենդանի խաղաղութեան կ'երթայ, ցից ու դերբուկ նամբաներով:

Ժողովուրդ Հայոց որ ի սփիւռս աշխարհի. նուիրական այս զիշերով, կեցած նորէն Սուրբ Ծննդեան վեհավայրին մէջ, ժեզի կը փոխանցեմ աւետիսը, որուն հաւատքը բան դարերէ ի վեր կը լեցին և կը զօրացնէ մեր քրիստոնէական կեանիքը: Աւետիսը, զոր օր մը հովիւներ և հրեշտակներ տուին աշխարհին, տակաւին կ'արձագանգէ կարծես այս սրբազն Այրին խորը: Զայն ժեզի կը փոխանցեմ նոյնութեամբ իրք Տիրոջ արիւնով քարախուած նշխարը: Ս'ո և պահէ իրք սպեղանի քաղցրութեան և պատգամ մխիթարութեան բովանդակ կեանիքիդ համար: Շարունակէ՝ հաւատալ յաւերժին, Յիսուսի ծննդեան և մարդուն աստուածացումին, և մայրացուր հոգիդ այս գիշերուան մեծ խորհուրդով, նման քու պապերուդ՝ որոնիք դարեր շարունակ կաւէն և հողէն վարդեր հանեցին, գեղումի քերելով գիշերները և բանալով դուռները երկնելին, իշեցնելով Աստուծոյ Որդին իրենց սիրտերուն մէջ և մսուրի գաղջընտանութեան:

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ, մեզ և ձեզ մէծ աւետիք:



ՏԾՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՁՆՆԴԵԱՆ

18. Весна 1975 г.

18 Յունիս 1975:

Սըրոց Ցանկորեանց մայրավանքի զանգերը զուարթագին կը զօդանջևն աւեսելու մանկացեալ Ցիստու Քրիստոնի ծնունդն ու յայտնութիւնը :

Սրբոց Յակոբեանց մայրավանքին ներս արտօնակարգ եռուզեռ մը կը տիրէ . դարաւոր այս հաստատութիւնը տոնական տարապ հագած ըլլայ կարծէք . հայկական միութիւններու արիներն ու արենոյշները իրենց փողերախումքներով ցուցադրական տողանցք կը կատարեն , որոնց չուտով կու զան միանալ քաղաքիս քրիստոնեայ միութիւններու արիներու խումքերը , հսկայ բանակ մը կագմելով վանքի մայր զարարաւէն մինչև Յովապէի Դուռ երկարող ճամբան վրայ : Անոնք Միարանութիւնն առաջ ճամբայ կ'ելլեն զէպի Բեթղեհէմ , Քրիստոսի Ծննդեան քաղաքը , հոն դիմաւորելու Ամեն . Պատրիարք Ա . Հայրն ու Միարանութիւնը :

Ու աշա վանքին ներս ամէն ինչ կը լուէ, կ'ամայանայ բացի աւագ զու-
ռէն, ուրի, Միաբանութիւն, պաշտօնիկութիւն, ժողովութիւն, օտարներ, հեռուս-
տացոյցի պաշտօնիկներ ու ձայնափուլի խօսնակներ արտակարգ եռուցնու մը
կը ստեղծեն, մինչ ժամը 9·30ին Ս. Աթոռիս բարեխնամ Պատրիարք՝ Ամենա-
պատիւ Տ. Եղիշէ Ս. Աթոռիսկոպս Տէրտիքեան, շրջապատռած Ս. Աթոռիս
միաբան Հայրենով և Աւագ Թարգմանի ու բարտպաններու առաջնորդութեամբ
Հանդիսաւորապէս կ'իջնէ Պատրիարքարանէն, նախագահելու ազաւորիչ թո-
փօրին ու Ս. Յննդեան Հանդիսութիւններուն:

Յիսուն ինքնաշարժներ ժամը 10ին ընթացք կ'առնեն Արրող Յակոբեանց մայրավանքին դէպի Բեթղեհէմ - Համբան յատուի Հսկողութեան տակ առնուած էր, թափօրը իր փառաւորութեան ու վեհութեան մէջ պահելու համար :

Ճամբու կէսին , Յունաց Ա . Եղիսա վանքին մօտ թափօրը կը զիմաւորուի Բեթղեհէմի , Բեթ—Սահուռք , Բեթ—ձէլէի պետական և այլ անձնութեռութիւններու կողմէ , որոնք , Համաձայն դարաւոր գեղեցիկ աւանդութեան , Էկած էին բարի գալուստ մաղթելու Պատրիարք Ա . Զօր , իր օքնարեր այցելութեան ասիթով : Կարճ Հիւրասիրութենէ ու բարիգալուստի արտայայտութիւններէ ևտք , թափօրը ինքնաշարժներու կրկնապատկուած թիւով կը չարունակէ իր յամբաքայլ ընթացքը : Հինգ ձիաւոր-ոստիկաններ կը չըջապատեն Պատրիարք Ա . Զօր ինքնաշարժը , Համաձայն տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող իրավիճակի , որպէս յարգանք՝ ընծայուած պետութեան կողմէ :

Ժամը 11.30ին թափօրը կը հասնի Բեթղեհէմ, ուր ամէն ինչ հայկական
է. զլխաւոր գիմաւորողը՝ կ'ըլլայ Բեթղեհէմի Հայոց Վանքի Տեսուչ՝ Հոգէ. Տ.
Մէսրոպ Վրդ. Տեսոյեան: Հայոց Վանքի զանոները կը զօղանջնն, բերկրու-
թէամք լեցնելով հրապարակին վրայ խռուած Հայ բազմութիւնը՝ Երուսաղէ-
մէն, Ետքայէն, Հայքայէն և Երկրին այլ վայրերէն:

Թափօրը ընթացք կ'առնէ Ծննդեան Տաճարի հրապարակէն, ուր դիմաւորութեան կը սպասէին Բեթղեհէմի քաղաքապետը, զինուորական կառավարիչը և ուրիշ բարձրաստիճան պետական ու ազգային անձնաւորութիւններ : Միաբանութիւն ու ժողովուրդ, թափօրական զնացքով և «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողութեամբ կը բարձրանան Ս. Ծննդեան Տաճարին կից գտնը ողջ հայապատկան Վանքը, ուր Պատրիարք Ս. Հօր «Պահպանիչ» ժողովուրդը կը ցրուի՝ հանգստանալու և ճաշէն ետք կրկին շարունակելու կրօնական այս հոգեպարար ու շքեղ հանդիսութիւնը : Պատրիարք Ս. Հայրը վանքի տեսչարանին մէջ կ'ընդունի զինք զիմաւորելու եկողները, ու կարճ հիւրափիրութենէ մը ետք ներկաները խոր տպաւորութեամբ հրաժեշտ կ'առնեն :

Եետ միջօրէի ժամը 2·30-ն է :

Զանգերը կրկին կը զօղանջնն, Միաբանութիւնն ու Հաւատացեալ ժողովուրդը եկեղեցի կանչելով : Ամեն . Պատրիարք Ս. Հայրը թափօրով կ'իջնէ Ս. Ծննդեան Տաճար ու «Հրաշափառ» կ'առաջորդուի սիւնազարդ զաւիթէն զէպի Ս. Այրը, իր ուժան ու երկրպագութիւնը կատարելու :



Ամեն. Պատրիարք Ս. Հայրը հանդիսաւոր մուտք կը գործէ Բեթղեհէմ:

Հանդիսաւոր մուտքին կը յաջորդեն Ս. Ծնունդի յատուկ ձաշու և երեկոյեան ժամերգութիւններն ու ծրագալոյցի արարողութիւնը : Ապա Քրիստոսի Ս. Այրին մէջ կը մատուցուի հանդիսաւոր Մուրք Պատարադ Հողէ . Տ. Նուրէ Հան Վրդ . Մանուկեանի կողմէ, որմէ անմիջապէս յետոյ Լուսարարապետ Գերչ . Տ. Հայրիկ Ս. Արքեպիսկոպոս Ասլանեանի նախադաշութեամբ կը կատարէ Ծննդեան նախատօնակ : Ապա Միաբանութիւնն ու ժողովուրդը թափօրով ու

շարականի երգեցողութեամբ, նոյն հանդիսաւորութեամբ անցնելով Տաճարի սիւնազարդ գաւիթէն, կը բարձրանան հայապատկան վանքը, ուր Աւետարանի ընթերցումէն ու «Փառք ի բարձունա»ի երգեցողութենէն ետք, ներկաները կ'երթան հանգստանալու :

Հայոց վանքի տեսչարանին մէջ Պատրիարք Ա. Հայրը ընթրիփի պահուն իրեն սեղանակից կ'ունենայ պետական ու ազգային անձնաւորութիւններ :

Գիշերը, ժամը 10ին, Բեթղեհէմի Հայոց վանքի զանգերը կրկին կը զօղանջն, Միաբանութիւնն ու ժողովուրդը հրաւիրելու կէս-գիշերային արարողութեան, որ տեղի կ'ունենայ Ա. Ծննդեան Տաճարի հայկական բաժնին մէջ :

Ժամը 11.30ին, արտակարդ ևուուղեն մը կայ : Այնչ Ամեն . Պատրիարք Ա. Հայրը կը զգեստաւորուի, Աւագ Թարգմանի ու բարպաններու առաջնորդութեամբ բարձրաստիճան ու պետական անձնաւորութիւններ մուտք կը դործն, տեղ զրաւելով Ամեն . Պատրիարք Ա. Զօր կողքին : Արդէն իսկ ժամանած են Երուսաղէմի քաղաքապետը՝ Վահեմ . Թէտի Քօլէքք, Բեթղեհէմի քաղաքապետը՝ Վահեմ . Էլիաս Ֆրէյժ, նահանգային զինուորական կառավարիչն ու շատ ուրիշներ : Կէս զիշերին, շարականի երգեցողութեամբ թափօրը կ'իջնէ Ծննդեան Ա. Այրը, որ մէկժամեայ տպաւորիչ արարողութիւնը կը ձայնասփուրի սատրիկայանէն : Ամեն . Պատրիարք Ա. Հայրը մանկացեալ Յիսուսի Ա. Այրէն կռւտայ իր պատզամք Հայաստանի և Սփիւռքի Հայաստանեաց Առաքելական Ա. Շինդեցւոյ զաւակներուն : Այս Հոգեպարար արարողութիւններ ետք, Ամեն . Պատրիարք Ա. Հայրը կը վերադառնայ Երուսաղէմ, մինչ Բեթղեհէմի մէջ կը չափանկուրի կէս-գիշերային արարողութիւնը, նախագահութեամբ Լուսարաբաղեան Ա. Զօր :

Ժամը 1.30ին Հայկական բաժնին մէջ կը մատուցուի Սուրբ Պատահողչ . Տ. Գեղարդ Արդ . Տաւուտարեանի կողմէ, որուն կը յաջորդէ «Զրուուչք»ի արարողութիւնը, նախագահութեամբ Լուսարաբաղեան Ա. Զօր :

Այս Հոգեգրաւ արարողութենէն ետք Լուսարաբաղեան Ա. Հայրը Քը ժամունի Ա. Այրին մէջ կը մատուցանէ օրուան հանդիսաւոր Պատարագը, ըմբռուած հոգեջնորհ Հայրերով ու բարենորհ սարկաւագներով : Պատարագաւորի առաջական ժամը 6ին :


Միաբանութիւնը կրկին թափօր կազմած և շարականի երգեցողութիւնը կ'անցնի սիւնազարդ գոտիթէն ու կը բարձրանայ հայապատկան վանքը զանգերու զօղանջնին միացնելու Աւետարանական աւետիսն ու «Փառք ի բարձունս»ը :

Կարճ դադարէ մը ետք, Լուսարաբաղեան Ա. Զօր առաջնորդութեամբ ու նոյն հանդիսաւորութեամբ թափօրը Բեթղեհէմին ճամբայ կ'ելլէ ու Երուսաղէմ կը համնի ժամը 8ին, ուր «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողութեամբ կը բարձրանայ Պատրիարքարան, Ամեն . Պատրիարք Ա. Զօր առայս Ծննդեան աւետիսը, զոր ն . Ամենապատուաթիւնը իր կարգին կը փոխանցէ ներկայ ժողովուրդին ու «Պահպանիչ»ով կ'արձակէ բոլորը :

* * *

Որպէսզի Երուսաղէմ մնացող հաւատացեալները չդրկուին Մննդեան Հոգեապարար արարողութենէն, յատուկ կարգադրութեամբ միարան հայրեք Բնթղենէմէն կը վերադառնան Երուսաղէմ ու Քրիստոսի Ս. Քերեզմանին առաջ կը կատարեն Ս. Մննդեան Ճրագալոյցի արարողութիւնն ու նախատօնակը, նախագահութեամբ Հոգչ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեանի: Իսկ Ճրագալոյցի Առորբ Պատարագը կը մատուցանէ Հոգչ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

Առաւտանք է, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Համաձայն աւանդութեան, Ս. Հրեշտակապետաց Վանքի Տեսուչ Հովհ. Տ. Ա. Կանան Վրդ. Թօփարեան, Աւազ Սեղանին վրայ կը մատուցանէ օրուան հանդիսաւոր Սուրբ Պատարագը, որը ի բացակայութիւն Ժառանգաւոր սաներու՝ կ'երգուի տեղացի զգիբեներու կողմէ:



ԴԻԱՆ Ա. ՏԵՂԵԱՅ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Սուրբ Տեղեաց գործերու պատասխանատու Հոգշ. Տ. Կիւրեն Ռ. Վարդապետ Գարիկեան լայն տեղեկագիր մը ներկայացուցած է Ամեն. Պատրիարք Ա. Հօր, ուր մանրամասնօրէն նկարազրուած են երկու հարցեր. Ա. Մննդեան Տանարի տարեկան առելին շուրջ քրիստոնեայ երեք համայնքներու համաձայնութիւնը և Ա. Աստուածամօր Տանարի նորոգութիւնները Գերսեմանի պարտէղին մէջ : «Այսոն»ի ներկայ և յաջորդ քիւրով կը ներկայացնենք այս շահեկան տեղեկագրին կարևորագոյն մասերը :

ԽՄԲ .

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Ա. Արքեպոս . Տէրտէրեան

Բարեխնամ Պատրիարք Առաքելական Ա. Աթոռոյ

Երուսաղէմ

Ամենապատիւ Ա. Հոյր ,

Թէ՛ Ա. Աթոռիս արխիտեստուն ի պահ , և թէ ի գիտութիւն մեր Միաբանութեան և Երուսաղէմասէր ժողովուրդին , սոյն տեղեկագրով կը ներկայացնենք Ա. Տեղեաց մէջ տարւոյս վերջին եռամսեակին տեղի ունեցած այն նորութիւնները , որոնք կը վերաբերին մասնաւրաբար Բէթղեհէմի Քրիստոսի Ա. Մննդեան Տաճարին , որ Երուսաղէմի Ա. Յարութեան Տաճարէն յետոյ համաքրաբիստոնէական երկրորդ ամենէն նշանակալից սրբատեղին է :

Ա. Մննդեան Տաճարը հիմնադրուած է Դ. Դարուն , Մեծն Կոստանդիանոսի և իր մօր՝ Հեղինէի ճեռքով : Հոռոմէական պազիլիք ոճով հսկայ տաճար մը , որուն սկսականատէրերն են այսօր Հայ , Օրթոստոք (Յոյն) և Հոռոմէական Կաթոլիկ երեք համայնքները : Յատկանշական պարագայ մըն է որ Յոյներէն յետոյ Տաճարէն ներս առաւելագոյն բաժինը ունեցող համայնքը մէնք ենք :

Համաձայն Դ. Դարու Լատին Եկեղեցւոյ մեծագոյն սուրբերէն մէկոն՝ Հերոնիմոսի , աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ Հերոնիմոսեան գրականութեան վկայութեան , իր հսկուորդներէն դէպի Հոռմ գրուած նամակներէն մէկուն մէջ մեր ժողովուրդին ներկայութիւնը այդ Տաճարէն ներս կը տարուի առ նուազն

մինչև Դ. Դար* : Ու մինչև այսօր, Ս. Յակոբեանց Միարանութիւնը, ի դիմաց Հայ ժողովութիւնու Հայաստաննայց Եկեղեցին, պահեր է իր այդ փառաւոր ներկայութիւնը Տաճարէն ներս : Իրեւ սեփականատէր քրիստոնեայ երեք մեծ Եկեղեցիներէն մին, գարերով ան եղեր է նուիրեալ պահակը համաքրիստոնէական այդ գերազոյն սրբութիւնա : Ու ասիկա մեծագոյն զոհողութիւններու զինով, զոհողութիւններ՝ սրոնք Հայ Երաստագէմի —Հայկական հոգեոր այս փոքրիկ թագաւորութիւնան պատմութիւնը կ'ընծայեն Հայոց պատմութիւն շափ սրտառուց ու տրամաթիք, երբեմն եղերական բլյալու չափ :

* * *

ԲԵԹՈՂԵԿԵՄԻ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏԱՁԱՐ .— Որուն առիծի բաժինն է որ իրեն վերապահեր է այսօր Օրթոսորս Եկեղեցին, ներկայացուած Յոյներով : Հնօրեայ այս պաղիիքին հիւսիսային թիւն մէջ սահմանափակուած է Հայ Եկեղեցին սեփականութիւնը, իսկ Եկեղեցւոյ գետնայարկին մէջ զտնուող Ս. ԾՆՆԴԵԱՆ քարայրին համահաւասար իրաւունքներով բնկերովի սեփականատէրն է ան Յոյներուն և Լատիններուն հետ :

ՎՀՃԻ նիւթ էին և Հետեարար տեղական կառավարութեան կողմէ կը մաքրուէին Եկեղեցւոյ հիւսիսային թիւն հայկական բաժնին և անոր յարակից Հետեհալ մասերը .—

ա) Հայկական երկրորդ մատրան մէջ զտնուող երեք պատուհանները (Թլփառման սեղանին շուրջ) և անոնց ներքնամասի կամարները (վիճելի՝ երեք համայնքներուն միջև) :

բ) Նոյն մատրան մէջ կեղրոնական քօրնիչին և նշան-գամերէն մինչև ձեղունի գերանները բարձրացող պատերու մասերը (վիճելի՝ Հայոց և Յունաց միջև) :

գ) Նոյն մատին մէջ զտնուող Ս. Այրի մուտքի հիւսիսային դրան ճակատի երկու կողմէ զտնուող սիւներուն հիւսիսային երեսները (վիճելի՝ Հայոց և Յունաց միջև) :

դ) Նոյն սիւներուն վերև զտնուող քօրնիչին հիւսիսային երեսը (վիճելի՝ Հայոց և Յունաց միջև) :

ե) Նոյն քօրնիչի հիւսիսային երեսի շարունակութիւնը, որ մաս կը կաղմէ մեր թլփառման խորանի շրջափակին (վիճելի՝ Հայոց և Յունաց միջև) :

զ) Ս. Այրի հիւսիսային մուտքի ճակատը (վիճելի՝ երեք համայնքներուն միջև) :

է) Նոյն մուտքի ճակատին, պատին՝ վերի կէս երեսը (վիճելի՝ երեք համայնքներուն միջև) :

* Aubrey, իրատարակիչ և քարզանիչ լատիներէն-յունարէնէ անգլերէնի, Palestine Pilgrims Text Society I էջ 1, «Նումակի Paulus-էն և Eustrachium-էն Marcella-ին» (386 Յ. թ.), թերզիկէն Հռոմ. քիւ նամակին XLVI որ կը վերաբերի Ս. Երկրի սրբավայրերան: Այս նամակը մաս կը կազմէ նաև Հերոնիմոսի նամակներուն հաւաքածոյին, իրատարակուած Փարիզ, 1877ին, Աբրամ Bareille-ի կողմէ, *Oeuvres complètes de Saint Jérôme* անունով (Ա. Հատոր, էջ 180): «Ինչ բայ տակաւին Հայոց, Պարսից, Հնդկաստանի և Երավանից ժողովուրդներուն մասին, ինչպէս նաև դրացի երկիր եզիապուր, քաջարի վանականներով, Գոնուռ և Կապադովիկի, Coele — Սուրբից և Միջազգութի և համայն Արևելի քաջարիններ, որոնք ամէն ոք մեր մօտ կը հասնին (Բերդեհէմ):

թ) Հայոց եկեղեցին դէպի Յունաց քաթոլիքոնը բարձրացող կիսակլոր զոյդ սանդուխներու միջև դանուող սալայատակը (վիճելի՝ Հայոց և Յունաց միջև) :

թ) Նոյն սանդուխներու միջև դանուող ցած պատը որ յառաջացած է Յունաց եկեղեցւոյն՝ համեմատաբար Հայոց եկեղեցւոյն ունեցած բարձր դիրքին պատճառաւ (վիճելի՝ Հայոց և Յունաց միջև) :

Մասնաւորաբար երեք պատուհաններու մաքրութիւնը, նոյնիսկ ոստիկանին ձևոքով, վիճի նիւթ կը դառնար իւրաքանչիւր տարեկան մաքրութեան և շատ յաճախ առիթ կ'ըլլար համայնքներու միջև Փիզիքական բախումներու, որովհետև տարակարծութիւններ կային նոյնիսկ ոստիկանին մաքրելիք միջոցի սահմաններուն չուրջ: Ու այս բոլորը կը յանդէին սրբածեղիները վարկարեկող կացութեան մը:

Ահա թէ ինչու վերջերս մասնաւանդ, իրաւակից երեք համայնքներու ներկայացուցիչներ ելք մը կը փնտուէին այս կացութեան, որոնք վերածուեցան պաշտօնական խորհրդակցական հինգ ժողովներու, անսաշտօն խորհրդակցութիւններով գումարուած 16 Սեպտեմբերէն մինչև 28 Դեկտեմբեր:

Այս ժողովներուն իրաւակից երեք համայնքները կը ներկայացնէին . . .

Հայեր — Տ. Կիւրեղ Շ. Վարդապետ Գարիկեան

Յոյներ — Տ. Վասիլիս Արքեպիսկոպոս

Տ. Դանիէլ Վարդապետ

Տ. Գրէկորի Վարդապետ

Տ. Աթանասիս Վարդապետ

Կարոլիկներ — Տ. Ռոք Վարդապետ

Տ. Պուլոս Վարդապետ

Տ. Մանսուր Վարդապետ

Ժողովները գումարուեցան Երուսաղէմի Յունաց Պատրիարքարանին մէջ: Անոնք շատ յաճախ եղան փոթորկալից նիստեր: Սկիզբը ծանր էին մեզի իրաւակից միւս երկու համայնքներուն պահանջները, բայց ժամանակը և յարատե միզը հետզհետէ փոխեցին կացութիւնը և չափաւորուեցան պահանջները:

Սոյն ժողովներուն արդիւնքները օրը օրին փոխանցուեցան Զերդ Բարձր Սրբազնութեան՝ որպէս զերազոյն վերահսկիչը մեր ազգային իրաւունքներուն, և Զերդ Սրբազնութեան տեսակէտները տարուեցան այդ ժողովներուն ու մեր իրաւունքներուն պաշտպանութիւնը կատարուեցաւ մեկնելով Զերդ Սրբազնութեան թելադրութիւններէն:

Մինչև 23 Դեկտեմբեր 1974 Զերդ Բարձր Սրբազնութեան գիտակցութեամբ մենք համաձայնած էինք սոյն տեղեկագրին կցուած վերջնական համայնագրի բոլոր կէտերուն, բացի անլուծելի մնացած հետեւալներէն . . .

ա) Իրաւական գոյավիճակը Ա. Ծննդեան Այրի հիւսիսային մուտքի արևելքը դանուող բոլորակ սիւնին հիւսիսային երեսին (վիճելի՝ Հայոց և Յունաց միջև) :

թ) Իրաւական գոյավիճակը վերոյիշեալ սիւնին վերև դանուող քօրնիչին հարաւային ամբողջ երեսին, ծայրէ ծայր (վիճելի՝ Հայոց և Յունաց միջև) :

զ) իրաւական գոյավիճակը մեր բաժնին երկրորդ մասին մէջ, Թւլ-փառաման խորանին շուրջ զտնուող պատուհաններու արտաքին երևին (վիճելի՝ Հայոց և Կաթոլիկներու միջև) :

Վէճը կը միար անուծելի, որուն առջև Յօյն և Լատին ժողովականները որոշեցին դիմել Զերդ Բարձր Սրբազնութեան:

Ժողովական կազմին եւսակցութիւնը Զերդ Բարձր Սրբազնութեան Հետ կատարուեցաւ 26 Դեկտ. 1974, Հինգշարթի երեկոյնան և ապա Զերդ Սրբազնութեան թելաղբանքով նոյն նիստը շարունակուեցաւ Բեթղեհէմի Ս. Շրնընեան Տաճարին մէջ, ուր անձամբ ներկայ եղաւ Զերդ Սրբազնութիւնը ևս :

Այս վերջին նիստին եղբակացութիւնը եղաւ հետեւալը .—

Մեր և Յունաց միջև վերոյիշեալ ան և բ հատուածներու վիճելի մասերուն սեփականութիւնը կէս առ կէս հաւասարապէս բաժնուեցաւ Հայոց և Յունաց միջև (Տեսնել Համաձայնագիրը) :

Խոկ երեք պատուհաններու արտաքին մասին իրաւական գոյավիճակը Ենթակայ մնաց այն գոյավիճակին որուն մէջ կը գտնուին Եկեղեցիի հիւսիսակողման բոլոր պատուհանները (Տեսնել Համաձայնագրի արամագրութիւնը) :

Երուսաղէմ մեր վերագրածին, նոյն օրը յետ միջօրէին, բնչաչո նաև յաջորդ օրը մինչև կէսօր, երեք Համայնքներու ներկայացուցիչներս պատրաստեցինք վերջնական համաձայնագիրը, սառորագրելի երեք Համայնքներու պետքն :

Շարաթ, 28 Դեկտեմբեր, կէսօրուան ժամը 12ին վերջին նիստ մը զումարուեցաւ Յունաց Պատրիարքարանի ամառանոցին մէջ, Գալիլիոյ վանք, Համբարձման լեռան վրայ : Ներկայ էին .—

Հայերէն .— Ամեն . Պատրիարք Ս. Հայր

ընկերակցութեամբ Տ. Շահէ Ս. Արքեպիսկոպոսի

Տ. Կիւրեղ Ծ. Վարդապետի

Յոյներէն .— Ամեն . Տ. Պէնէտիկոսոս Ս. Պատրիարք

ընկերակցութեամբ Տ. Վասիլիոս Արքեպիսկոպոսի

Տ. Դանիէլ Վարդապետի

Տ. Գրէկօրի Վարդապետի

Տ. Աթանասիոս Վարդապետի


Լատիներէն .— Յրանչեսկեան Միաբանութեան Գեր. Կիւստոսը

ընկերակցութեամբ Տ. Ռոք Վարդապետի

Երեք Համայնքներու հոգեոր պետերը սառորագրեցին պատրաստուած Համաձայնագրերը և անոնց յարակից այն նամակները որոնցմով Համաձայնութեան պատճէնները պիտի փոխանցուէին նաև Երուսաղէմի և Բեթղեհէմի կառավարական կտղմին, ի դիտութիւն :

Նիստը փակուեցաւ պատուասիրութիւններով և փոխադարձ յարդանքի ու սիրոյ արտայայտութիւններով :

Այսպէս կը փակուէր Հարիւթյանամեակ մը տեսող Ս. Տեղեաց յատուկ վէճերու այս շարքը, որ սպառած էր տնտեսական և բարոյական այնքան կորով, ի նախատինս Քրիստոնէութեան :



Միւս կողմէ, ազգահովարար այս բոլորը տուեաներ պիտի ըլլան աւելցնելու քրիստոնէական սէրը, յարգանքը և գոյխաղարձ վստահութիւնն ու համագործակցութիւնը Երուսաղէմի քրիստոնեայ Հոգենոր և ազգային երեք մեծ համայնքներուն միջև, ու յաչս այլազաւաններու հանդիսանալու քրիստոնէական համերաշխութեան մը աչքառու ազգացոյցը:

Ստորև կու տանք ստորագրուած համաձայնողը անդերէն քննողին ու անոր Հայերէն թարգմանութիւնը :

AGREEMENT

After a keen and thorough study of the problems, concerning certain rights in the Basilica of the Nativity, during the Annual General Cleaning; and

Declaring that the following Agreement will not constitute a breach of the Status Quo, and it will be without prejudice to the existing rights, privileges, practices and claims, which some Community might have, and without establishing new rights or claims in favour of a particular Community,

We, the undersigned, i. e. the Greek Orthodox Patriarch of Jerusalem, the Custos of the Holy Land and the Armenian Patriarch of Jerusalem, having at heart the decorum of the Religious Services in the most sacred places of Our Redemption, met on the 28th day of December, 1974 and agreed on the following Compromise, which will bind all members of the Three Religious Communities:—

A. — THE GREEK ORTHODOX will clean:

- 1) The* side wall, between the two steps, leading from the Armenian Church to the Greek Orthodox Church "KATHOLICON".
- 2) The whole Pillar — west to the Northern Entrance of the Grotto, with its capital and the whole Pillar — east to the Northern Entrance of the Grotto, with its capital, but this second Pillar from the Partition Wall and upwards.
- 3) The upper sloping, across Façade Wall of the Northern Entrance of the Grotto, and between the a/m two Pillars.
- 4) All sides of the Cornice above the two Capitals of the a/m two Pillars.
- 5) The parts (underneath & southern) of the a/m Cornice between the Capital of the Pillar — east to the Northern Entrance of the Grotto and the Capital of the Rectangular Pillar — east of the last Pillar and to the North of the Altar of the Greek Orthodox Church.

B. — THE ARMENIANS will clean:

- 1) The three windows in the Armenian Chapel (Eastern part of the Northern Transept, East of the Central Cornice), under the level of the Central Cornice, with their window recesses, from inside.

Note: The three windows will remain closed during the Cleaning. If any pane is broken, either during the General Cleaning or in any other time, the replacing of the broken pane or part of the window will be made by the Government.

- 2) The Wall in the Armenian Chapel (Eastern part of the Northern Transept, East to the Central Cornice), between the nās and the beams of the ceiling.
- 3) The floor space between the two steps, leading from the Armenian Church to the Greek Orthodox Church "KATHOLICON".
- 4) The part of the Pillar — east to the Northern Entrance of the Grotto — from the floor till the height of the Partition Wall.
- 5) The Northern Side of the Cornice, between the Capitals of the Pillar — east to the Northern Entrance of the Grotto — and the Rectangular Pillar in the wall, east of the last Pillar.

C.— THE THREE RELIGIOUS COMMUNITIES will clean:

The Northern Face of the Grotto.

Benedictos,	Maurilio Sacchi,	Yegishe Derderian ,
Greek Orthodox Patriarch of	Custos of the	Armenian Patriarch of
Jerusalem .	Holy Land .	Jerusalem .

Copies: a) District Commissioner of Jerusalem
 b) Military Commander of Judea & Samaria
 c) Military Commander of Bethlehem.

Հ Ա Մ Ա Զ Ա Յ Ա Գ Ի Բ

Բերդեկմի Ս. Ծննդեան պազիլիքայի, մասնաւորաբար տարեկան ընդհանուր մաֆրութեան, որոշ իրաւունքներուն կապակցութեամբ և այդ առիթով ծագող խնդիրներու խրդամիտ և մանրամասն ուսումնափրութենէ մը եսք, ինչպէս նաև

Յայտարարելէ յետոյ թէ ներկայ համաձայնագիրը պիտի չպատճառէ գոյավիճակի (STATUS QUO) շեղում մը, ինչպէս նաև տն պիտի չհակասէ արդէն իսկ գոյութիւն ունեցող իրաւունքներուն, առանձնաշնորհներուն, իրազործումնենուն և պահանջներուն՝ որոնք որոշ համայնք մը կրնայ ունենալ, և նոյն ատեն չի հաստատեր նոր իրաւունքներ կամ պահանջներ ի նպաստ որևէ մասնաւոր համայնքի.—

Մեմ ստորագրեալներս, այսինքն Երուսաղէմի Յոյժ Օրբոսուն Պատրիարքը, Ս. Երկրի պահապանը (Կիւստուր) * և Երուսաղէմի Հայոց Պատրիարքը, ի մոտի ունենալով մեր

* Ֆրանչիսկան կարուիկ Միարամութեան Տեսուք:

փրկութեան ամենասուրբ սրբավայրերուն մէջ տեղի ունեցող հոգևոր ծառայութիւններու վայելչութիւնը, հանդիպեցանիք իրարու 28 Դեկտեմբեր 1974ին և յանգեցանիք հետևալ իրաւախոհութեան, որոնց կապուած պիտի մնան երեք կրօնական համայնքներու բոլոր անդամները**:

Ա. ՀԱՅՆ ՕՐԹՈՏՈՔՄԱՆԵՐ պիտի մաքրեն

- 1) Կողքի պատր այն երկու աստիճաններուն միջև, որոնք կ'առաջնորդեն Հայոց Եկեղեցին Յոյն Օքուսնու Եկեղեցիի քարողիքները:
- 2) Ամբողջ սիւնը, որ կը գտնուի Ս. Այրի հիւսիսային մուտքի արևմուտքը, իր սիւնազլուխով միասին, ինչպէս նաև ամբողջ այն սիւնը որ կը գտնուի Ս. Այրի հիւսիսային մուտքի արևելքը, իր սիւնազլուխով միասին. սակայն այս երկրորդ սիւնի պարագային (մաքրութիւնը պիտի ըլլայ) բաժանման պատեն դէպի վեր (միայն):
- 3) Վերոյիշեալ երկու սիւններուն միջև գտնուող Ս. Այրի հիւսիսային մուտքի (արտաքին) նակատի պատին վերի ամբողջ քեֆութիւնը:
- 4) Վերոյիշեալ երկու սիւններու սիւնազլուխներուն միջև գտնուող քօրնիշը իր բոլոր կողմերով:
- 5) Ստորին և հարաւային մասերը (երեսները) վերոյիշեալ քօրնիշին, որ կ'իյնայ Ս. Այրի հիւսիսային մուտքին արևելքը գտնուող սիւնազլուխին և քառանկիւն այն որմասնան սիւնազլուխին միջև, որը կը գտնուի արևելեան կողմը այդ վերջին սիւնին, իսկ Յոյն Օքուսնու Եկեղեցիի սեղանին հիւսիսային կողմը:

Բ. ՀԱՅԵՐ պիտի մաքրեն

- 1) Հայոց Եկեղեցիի երեք պատուհանները (հիւսիսային քեկի արևելեան մասին մէջ, կեդրոնական քօրնիշին արևելքը) կեդրոնական քօրնիշի մակարդակին վար, պատուհաններու ներքին կամարակապերով միասին:
Ծանօթ .— Մաքրութեան ընթացքին այս երեք պատուհանները փակ պիտի մնան. ընդհանուր մաքրութեան ընթացքին կամ որևէ ատեն երեկ որևէ ապակի կոտըրուի, կոտրուած ապակիին կամ վնասուած ուրիշ որևէ մէկ մասի վերանորոգումը պիտի կատարուի կառավարութեան կողմէ:
- 2) Հայոց մատուուի (կեդրոնական քօրնիշին արևելքը, հիւսիսային քեկի արևելեան մասը) պատին այն մասը որ կը գտնուի զամերուն և առաստաղի գերաններուն միջև:

** Հայ, Յոյն և Լատին :

- 3) Յատակի մասը որ կը գտնուի այն երկու աստիճաններուն միջև, որոնք կ'առաջնորդեն Հայոց Եկեղեցին դեպի Յոյն Օքքուոքս Եկեղեցիի ժաքոլիքնը:
- 4) Ա. Այրի հիւսիսային մուտքի արևելքը գտնուող սիւնին յատակին մինչև բաժանման պատի բարձրութեան տակ ինկող մասերը:
- 5) Հիւսիսային երեսը այն ժօրնիշին որ կը գտնուի սիւնագլուխներուն միջև այն սիւնին որ կը գտնուի Ա. Այրի հիւսիսային մուտքի արևելքը և պատին մէջ հիւսուած այն ժառակուսի որմասեան որ կը գտնուի վերջին սիւնին արևելքը:

Գ. ԵՐԵՔ ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ պիտի մաքրեն

Ա. Այրի հիւսիսային նակատը:

ՊԵՆԵՑԻՑՈՍ ՄԱՎՐԻԼԻՕ ՍԱՔՉԻ ԵՊԻՇ ԱՐՔ. ՏԵՐՑԵՐԵԱՆ

Յոյն Օքք. Պատրիարք Պահապան Ա. Երկրի Պատրիարք Հայոց
Երուսաղեմի

Օքինակներ՝

- ա) Երուսաղեմի նահանգային կառավարիչին
բ) Յուղայի և Սամարիայի զինուորական կառավարիչին
ց) Բերդեհեմի զինուորական կառավարիչին

* * *

1974 Դեկտ. 30ին տեղի ունեցաւ Բեթղեհեմի Ա. Մանդեան Տաճարին ընդհանուր աւելը, ու սուածին անգամ ըլլալով ի գործ զրուեցան վերոյիշեալ համաձայնագրին բոլոր պարմանները: Ամէն տարի վէճերու և տարակարծութեանց առելք եղող այս սովորութիւնը այս տարի կատարուեցաւ համերաշխութեան և փոխադարձ յարգանքի մթնոլորտի մը մէջ, տառն դոյզն վէճի:

Ա. Մանդեան Տաճարի ներքնամասին վերաբերող այս վէճերու հարթումին հետ, նոյն ժողովներով վերջնականացէս կը Հարթուէք նաև Եկեղեցիի տրտաքին բաց դաւիթին սալայատակին վերանորոգութեան խնդիրը, որուն սեփականութիւնն ու նորոգութիւնը կը մնար վիճելի Հայ, Յոյն և Լատին իրաւակից երեք համայնքներուն միջն:

1935ին անգլիական կառավարութիւնը նկատի ունենալով սոյն դաւիթին շատ անփառունակ վիճակը, զայն կ'ենթարկէր Հիմնական վերանորոգութեան, որուն ծախսերը կը գանձուէին իրաւակից երեք համայնքներէն, հաւասար վճարումներով:

Վերջին տարիներուն սոյն դաւիթի սալայատակին կարգ մը մասերը բաւական հիմնած էին, հատեւարար տեղական կառավարութիւնը տարւոյս Օդուսոս ամսուան ընթացքին կ'իմացնէք իրաւակից երեք Պատրիարքարքարներուն, թէ ըստ վերոյիշեալ նախընթացին, դաւիթի սալայատակին վերանորոգութիւնը պիտի կատարէր և ծախքերը պիտի զանձէր երեք համայնքներէն:

Երեք համայնքներու ներկայացուցիչներու յևս ժողովական քանի մը նիստերու և նոյն համայնքներու հոգեոր պետերու վերջնական համաձայնութեամբ, 24 Սեպտեմբեր 1974ին թէ՝ գրաւոր և թէ՝ բերանացի տեղեկացուցիչ տեղական կառավարութեան՝ թէ Երեք համայնքները իրենք իսկ նախաձեռնարկ սիմբի ըլլան նորոգութեան դործին, քանի որ զաւիթին Երեք համայնքներու սեփականատիբութեան սկզբունքին շուրջ որեւէ անհամաձայնութիւն չկայ իրենց միջև :

1974 Հոկտեմբերի ընթացքին իրեք համայնքներու կողմէ նորոգութեան զործը յանձնուեցաւ Բեթղեհմցի յանձնառուի մը, Պրն. Մամի Հարս : Մինչև Դեկտեմբերի 20 վերջացաւ վերանորոգութիւնը և ծախքը վճարուեցաւ Հայ, Յոյն և Լատին երեք իրաւակից համայնքներու հաւասար մասնակցութեամբ :

Մատչեմք ի Համբոյր Ձեր Ա. Աջոյն
Կիիրել Ծ. Վ. Պ. Գլբիկեան
Վերահսկիչ Սրբառեղեաց



ԺՆՈՒՆԴԸ ԵՒ ԱՍՏՈՒԱԺԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՀ

Ուխտաւորներ որոնք Ծնունդի շրջանը Սուրբ Երկրին մէջ կ'անցընեն, յաճախ կը զարժանան որ Բեթղեհէմի մէջ Ծննդեան տօնը երեք տարրեր թուականներու կը հանդիսաւորուի . 25 Դեկտեմբերին՝ Արևմտեան քրիստոնեաներէն, 7 Յունուարին՝ Արևելեան եկեղեցիներու մեծագոյն մասէն, և 19 Յունուարին՝ Գրիգորեան Հայերէն: Արևելքի և Արևմուտքի տարրերութիւնը դիւրաւ հասկնալի է . մեր 7 Յունուարը իրականին մէջ 25 Դեկտեմբերին է ըստ Յուլիանի տոմարին՝ տակաւին պահուած Արևելքի կողմէ, որուն տեղ, ժԶ դարու վերջէն ու ժՔ դարէն սկսեալ մեր բարեփոխեալ Գրիգորեան տոմարը կը զործածուի: թէ՛ Արևելքը և թէ՛ Արևմուտքը, տարրեր տոմարներ ունենալով հանդերձ, Ծնունդը կը տօնեն 25 Դեկտեմբերին: Խոկ ի՞նչ կրնանք ըսել հայկական թուականին մասին:

Հայերուն համար, որոնք ևս Յուլեան տոմարին կը հետեին, մեր 19 Յունուարը իրենց 6 Յունուարն է, այսինքն Արևելեան եկեղեցիներու Աստուածայայտնութեան օրը: Այսպէս, անոնք կը թուին Աստուածայայտնութիւնն ու Ծնունդը տօնել միենոյն օրը: Ինչպէս պատահած է որ անոնք բաժնուած են բոլորին կողմէ ընդունուած գործածութիւնէն: Հայերուն պատասխանը այն է, որ ո՛չ թէ իրենք, այլ քրիստոնեայ միւս եկեղեցիները լքած են հին աւանդութիւնը՝ որուն ցարդ միմիայն իրենք հաւասարիմ մնացած են: Անոնք կ'ուզի՞ն ըսել թէ Յիսուս իրականին մէջ Յունուարին ծնաւ. այո՛, սակայն այնպիսի պատճառներով՝ որոնք ուրիշներու կողմէ պիտի չընդունուէին:

Սկզբնական շրջանի եկեղեցին, ժամանակի մը համար, Քրիստոսի կենսագրական այդ ժանրամասնութիւնն ոչ լուր ունէր և ոչ աւ, ըստ երևոյթին, հետաքրքրուած էր անով: Մատթէոսի և Ղուկասի կողմէ Յիսուսի ծնունդին օրուան կամ նոյնիսկ եղանակին մասին ոչ մէկ տեղեկութիւն տրուած է: Այս հարցը երևան եկաւ աւելի ուշ, ըստ երևոյթին Բ գարու վերջաւորութիւնն ոչ առաջ: Իբրև հետևանք, ժամանակի զարգացած քրիստոնեաներէն ոմանք զիտողութեամբ փորձեցին գտնել Յիսուսի ծնունդին թուականը: Կղեմէս Աղեքսանդրացի կը խորհէր որ ատիկա 20 Մայիս կամ 18 նոյեմբեր կրնար եղած ըլլալ: Շուրջ 243ին Լատին գրող մը, ընդունելով այն շատ տարածուած աւանդութիւնը թէ 25 Մարտը առաջին օրն էր Արարչաղործութեան, կը թելադրէր 28 Մարտը, այսինքն օրը՝ Երբ արևը (և Քրիստոս Առաքինութեան Աստուածն էր) ստեղծուած էր: 2 և 19 Ապրիլ թուականներն ալ առաջարկուած էին: Ուրիշներ Յուլիոս կը դնէին զարնան, այնպէս որ ձմեռը կ'ըլլար ծնունդի եղանակը: Յուլիոս Ափրիկեցի (221), ընդունելով 25 Մարտը իբրև օրը Արարչաղործութեան և՛ւ Յարութեան, և հաշուելով որ այս «կեսնքի Երկրորդ սկիզբ»ը կընար

ժիայն պատահիլ ճիշդ այն օրը երբ պատահած էր Յղութիւնը, ծնունդի թուականը որոշած էր իրեւ 25 Դեկտեմբեր:

Այս բոլորը, ինչպէս նաև այլ առաջարկութիւններ, անհատական կարծիքներ էին լոկ, որոնց, կը թուի թէ, Բ և Գ դարերու Եկեղեցին յատուկ կարեւորութիւն մը ընծայած չէ, և որոնք չեն առաջնորդած Եկեղեցական հանդիպութեան մը Հաստատումին: Եւ ինչո՞ւ Եկեղեցին ծնունդի օրուան մը տօնակատարութիւնը պէտք էր Հաստատէք: Հելլենական աշխարհին մէջ հեթանոսական սովորութիւն էր Հանրային արարողութիւններով նշել իշխողներու և նշանաւոր անձնաւորութիւններու (օրինակ՝ Պղատոնի) ծնունդի օրը: Եկեղեցին ևս պիտի հետեւ այս սովորութեան: Մեծ թիւով քրիստոնեաններ, որոնք այդ «արտաքին» աշխարհին կու զային, ապահովաբար Հակամէտ էին նման ընթացքի մը. բայց ուրիշներ, որոնց մէջ հոչակաւոր գրողներ և վարդապետներ, ինչպէս Կղեմէս և Որոգինէս, Աքնոպիոս և Եպիփան, Հակամակեցան Եկեղեցին ծիսական կեանքին մէջ այսպիսի «Հեթանոս» սովորութեան, մը ներմուծումին, որովհետև ատելիկա օտարութի զաղափար մըն էր, որ կրնար քրիստոնեայ միտքերէ ներս ցաւալի չփոթ ստեղծել:

Բայց և այնպէս, ի վերջոյ այդ զաղափարը որդեղը բուեցաւ, սակայն երեւթապէս տարրեր այն իմաստէն՝ որ Հելլենական հիմը կը կագմէր: Տօները մարդկային խորարմատ պահանջը մըն են, որոնք պաշտամունքի ամենէն թանձրացեալ ձեւը կը ներկայացնեն: Պաշտամունքը «զուում»ի ընդունակ է. ան բացառիկ պարագաներու ժիայն ամբողջութեամբ «զուու» կամ «ուղեկան» կը դառնայ, այսինքն անջատուած՝ ժամանակէն և խորհրդանշական արարքներէ ու շարժումէ: Յիսուս Քրիստոս, թէն ո՛չ թագաւոր էր և կամ նշանաւոր անձնաւորութիւն՝ Հելլենական ըմբռնումով, սակայն կը նկատուէր իրեւ մարդկաղութիւնը երկնաւոր Գոյութեան մը, յաւիտենարպէս նախազոյ Աստուածային Բանին, և իր ծնունդը կը համարուէր երիք (Epidemia (Աստուածոյ ժամանութիւնը), theophanenia (Աստուածոյ ինքնայայտնութիւնը)). մէկ խօսքով պատահար մը՝ արժանի նշումի և Հանդիսաւորութեան:

Առաջին անգամ Եղիպատոսի կնոստիկ Վասիլիստեաններն էին որ ուշադրութիւն դարձուցին Ծնունդի հոգեկան իմաստին և զայն Հանդիսադրեցին: Առնոց Համար, Յիսուս Քրիստոսի «իրաւ», այսինքն հոգեկէն ծնունդը պատահած էր Յորդանան գետին մէջ մկրտութեան պահուն, երբ նախազոյ Քրիստոս իջած էր մարդ Յիսուսի մէջ և զայն ըրած իր ժամանակաւոր բնակաբանը: Հետեւաբար անձնք տօն մը Հաստատեցին նշելու թէ՛ Յիսուսի մկրտութիւնը և թէ՛ (կուսական) ծնունդը Քրիստոսի: Կղեմէս Աղեքսանդրացիէն (Բ զարու վերջաւորութիւն) կը առեղեկանանք թէ այս տօնը կը հանդիպէր Յունուար նը նախորդող զիշերին: Ինչո՞ւ Որովհետև մինոյն զիշեր Եղիպատացիներ կը տօնէին ամէն տարի կրկնաւող ծնունդը յաւիտենութիւնը անձնաւորող Այօն չաստուածին՝ կոյս Փօրէն, զայն կապելով Նեղոսի Կեանքի Զուրի հնթադրական ստեղծումին կամ վերանորոգութեան: Եսայն այդ գիշեր Հելլեններ ևս կը յիշատակէին Գիոնիսիոսի՝ աշխարհի վրայ յայտնութիւնն ու որոշ ակնազրիւրներու (կամ վասակիներու): Հրաշայի կերպափոխութիւնը զինիի: Վասահարար և Յունուարը կանխոտ զիշերը Եղիպատոսի և Հելլենական Արեւքի մէջ խորհրդաւոր Արրարան Գիշեր մը կը նկատուէր:

Սակայն որու չէ թէ Աղեքսանդրիոյ Եկեղեցին երբ և ինչպէս պաշտանապէս որդեղը այդ հեթանոսական խորհրդաւոնին կնոստիկնան վերամեկնաւրանութիւնը: Եղիպատոսի սովորական քրիստոնեային համար, Յիսուս Քրիս-

տոսիք ծնաւնդը՝ ամէն տարի կրկնուող բան մը չէր, այլ պատմականօրէն եղական դէպք մը, որ կ'ակնարկէր Յիսուսի՝ իր մօր մարմնէն գործնականօրէն մարմին ստանալուն — Մարդեզութեան։ Դարձեալ, պատմականօրէն եղական էր սրբագործումը Զուրին՝ Յորդունանի մէջ Մկրտութեան միջոցաւ։ Ինչ ալ ըլլայ պատասխանը մէր հարցումներուն, իրականութիւնը այն է որ Դարու վերջաւորութեան կամ Զորբորդի սկիզբը՝ Եզիզտական Եկեղեցին Յունուարին կը տօնէր theοրհանειան (իրրե Յիսուսի Ծնունդը) և ըրիհանειան (որպէս էջքը Սուրբ Հոգիին՝ Մկրտութեան առեն)։

Եզիզտոսէն, և Պաղեսատինի վրայէն, տօնը արագօրէն տարածուեցաւ կրօնական ուրիշ գաւառներ, Արեմուտքի բայց մասնաւորաբար Արեմելքի մէջ (ներառեալ Հայոստանը)։ Անոր նշանակութիւնը աւելի չետուեցաւ չուտով, յաւելումովը երկու այլ դէպքերուն՝ կապուած Քանայի հարաշբին և Արեմելքէն իմաստուն Մարդոց (Երեք Մոռերուն) այցելութեան։ Այս յաւելումին մէջ կարեր գեր ունէր Երուսաղէմի Եկեղեցին։ որովհետեւ եթէ Աստուածայայնութեան տօնը կ'ակնարկէր Ծնունդին և Մկրտութեան, ասդա Տեթղեհէմն էր առաջինին վայրը, և Յորդանան գետը՝ երկրորդինը։ Բ դարէն սկսեալ Բեթղեհէմցինինը գաւառի ծնունդինը վայրը։ այնպէս որ երբ Կոստանդին Սրբատեղիներով սկսաւ հետաքրքրուիլ, իր մայրը դժուարութիւն չունեցաւ գտնելու և որոշելու ամի վայրը՝ որուն վրայ կատուցանեց Ծննդեան տաճարը։ «Կոստանդինեան» Եկեղեցիներու շինութիւնը Երուսաղէմի և Բեթղեհէմի մէջ՝ Պաղեստինը վերածեց քրիստոնէական ուխտագնացութեան ամենէն կարեւոր կեղդունին։ Երուսաղէմի «Սր. Յակոբի ծխարան»ը, ինչպէս նաև տաճարն ու ոսվորութիւնները — մասամբ վերածենուած Կիւրեղ Երուսաղէմացիէ (351-386) — հետզհետէ չքեղ գարձան՝ տպաւորելու չափ այցելուներն ու դրացիները, զանոնք մզելով ընդօրինակութեան՝ իրենց բնակավայրերուն մէջ։ Եւ իրապէս, ո՞վ աւելի լաւ կրնար դիտնալ այս խնդիրներու մասին։ քան անոնք որոնք կ'ապրէին ուր որ սրբազն դէպքերը պատահած էին։ Զորբորդ դարու մեծագոյն մասին ընթացքին, Աստուածայայնութիւնը, վերև յիշուած նշանակութեամբ, տօնուեցաւ ո՛չ միայն Եզիզտոսի և Պաղեստինի, այլ նաև Կիպրոսի, Սուրբոյ, Փոքր Ասիոյ, Հայոստանի և Ֆրանսայի, Սպանիոյ ու թերեւս իտալիոյ զանազան մասերուն մէջ։ Եփրեմ Ասորի գայն կը նկատէր իրեւ քրիստոնէական տօներուն ամենէն վսեմը։ Հայերէն հին ձաշոցէ մը կը տեղեկանոնք թէ Բեթղեհէմի մէջ արարողութիւնները կը սկսէին 5 Յունուարի երեկոյնան, «Հովիւներու վայրը», շարունակուելու համար «Ծննդեան Այրին մէջ» և ապա՝ տաճարին։ Արարողութիւնները կ'աւարտէին կէս գիշերին պաշտուած պատարագով, որմէ ետք եպիսկոպոսն ու վարդապետները կը դիմէին դէպի Երուսաղէմ, առաւօտեան ժամերգութեան, որուն կը յաջորդէր պատարագ։ Տօնը կը շարունակուէր ութը յաջորդական օրերու ընթացքին, զանազան սրբատեղիներու մէջ պաշտուած օրական պատարագով մը։

Մինչ Աստուածայայնութիւնը այսպէս կը գրաւէր Արեմելքն ու Արեմուտքի զանազան մասերը, Հոռմի մէջ Հաստատուած տօն մը՝ Քրիստոսի ծընունդը 25 Դեկտեմբերին նշող, կը տարածուէր քրիստոնէայ աշխարհի մնացեալ մասերը։ Անիկա միայն տօնն էր Ծնունդի։ Այս մասին միայն 336ին կը լսենք, Կոստանդինի ժամանակի, սակայն ան աւելի կանուխ ալ կրնայ հաստատուած ըլլալ։ Ինչ էր պատճառը այս տօնի հաստատումին։ արդեօ՞ք արտայայտութիւնն էր Հոռմի և Աղեքսանդրիոյ ու Երուսաղէմի միջն գոյութիւն ունեցող ծածուկ մրցակցութեան մը, կամ Հոռմի փափաքին՝ Նիկիոյ ժողովէն ետք Հաստատելու որոշ տարբերութիւն մը ուղղափառ Մարդեղութեան և Մկրտչա-

կան՝ Աստուածայայտնութեան միջև։ Եւ ինչպէս 25 Դեկտեմբեր։ Այս վերջին Հարցումին ծխական պատմութիւնը կը թուփ թէ բաւական միօրինակ պատասխան մը ունի։ Համաձայն Ք. Ա.՝ 239 թուականին վերաբերող հելլենական (Հոդիպատական) օրացոյցի մը, 25 Դեկտեմբերը «տարեկարգն էր Հելլոսի, այն օքրը՝ երր լոյսը կը սկսի երկարիլ»։ Արև Հելիոսի պաշտամունքը հետպհետէ տարածուեցաւ Արևելքի մէջ և մէջկէ աւելի կերպարանքներով մուտք գործեց Կայութեանէն ներս։ Ք. Ա.՝ 274ին Աւրելիանոս այնքան յառաջ գնաց որ զայն պետութեան պաշտօնական կրօնքը հռչակեց։ Այդ կրօնքին գերազոյն աստուածութիւնը Անպարտելի Արեն էր, Կայութեան պաշտպանը։ Կոստանդին ևս, իր կեանքի առաջին շրջանին, ծանօթ էր և հետեւող այս կրօնքին։ Սակայն ան կրօնափոխ եղաւ — ասիկա փաստ մը չէր թէ իրա՛ւ Անպարտելին Քրիստոսն էր։ Քրիստոս՝ որ մահին յաղթած էր։ Քրիստոսի և Արևի զուգորդութիւնը այդ օքրուն նորութիւն մը չէր։ Քու Ղուկասի (Ա. 78) Քրիստոս էր «Արեգակն ի բարձանց»։ Երկրորդ գարէն սկսեալ Սուրբացի քրիստոնեաները գէպի արևելք դարձած կ'աղօթէին։ Հետեւարար, զարմանալի չէ որ փոխանակ անդիտանալու տօնակատարութիւն մը որ իր արմատները սովորութեան և ժողովրդական աւանդութեան մէջ ունէր։ Հոռմի իշխանաւորները որոշեցին որդեպրել զայն միաժամանակ քրիստոնէացնելով անոր խմասոր։ Սակայն Ծնունդի տօնին հաստատումը 25 Դեկտեմբերին՝ պարզ հնարք մը չէր, այլ, Հ. Լիցմանի բառերով, «թողութեան ծխական արարք մը՝ կոստանդինի կրօնափոխութեան համար»։

Ծնունդի տօնը արագօրէն տարածուեցաւ Ավելիկէի, և աւելի դանդաղ՝ Ֆրանսայի և այն վայրերուն մէջ ուր Աստուածայայտնութիւնը արդէն իսկ արմատացած էր։ Աստուածայայտնութիւնը սակայն չննջուեցաւ, այլ նոյնիսկ յետադային Հոռմի ներմուծուեցաւ։ բայց անկէ հանուեցաւ անոր գլխաւոր իմաստը, և գգուեցան միայն մէկ կամ «Երեկ հրաշքներ»ը (Մոգերը, Մկրտութիւնը և Քանայի հարաանիքը)։ Ժամանակի մը համար Արևելքը յամասեցաւ, սակայն 379ի և 386ի միջին Ծնունդի տօնը մտաւ Կապագովկիոյ, Կիպրոսի, Կոստանդնուպոլսոյ և Անտիոքի Եկեղեցիներէն ներս։ Աղեքանողրիան դիմադրեց մինչեւ 431, Երուսաղէմը՝ մինչեւ 451, կամ, Համաձայն ուրիշներու՝ մինչեւ Զ գարու կէսը։ Միայն Հայաստանիայց Եկեղեցին, որ գորաւոր և դիմացող աղղեցութիւն կրած էր Երուսաղէմի Եկեղեցիէն, Հաւատարիմ մնաց և Յունուարին։ Յուստին Կայսր (565-578) կայորութեան մէջ Ծնունդը պարտաւորիչ դարձուց, սակայն այդ օքրուն Կայսրը և իր Եկեղեցին Հայաստանի վրայ մէծ աղեցութիւն չունէին։

Երուսաղէմի Եկեղեցին, Հաւատարիմ իր «Սուրբական» ծէսին, շարունակեց իր արարողութիւնը և պաշտամունքի համար գործածեց Եկեղեցիներ՝ կառուցուած այն վայրերուն վրայ ուր սրբազն գէպքերը պատահած էին։ Բեթղեհէմի տաճարը, կառուցուած, ինչպէս կը զրէ Պորտոյի Ռիխտաւորը, «կոստանդինի համանով՝ այն վայրին վրայ ուր մեր Տէրը Յիսուս Քրիստոս ծնոււ», իր սկզբնական շէնքին մէջ կը պարունակէր Ծննդեան Այրը, որուն մէջ էր Մոռուրը։ Տաճարը, վնասուած Սամարական ապստամբութեան ընթացքին (521-528), վերաշնոււեցաւ և կառուցուածքի ոնային մասնակի փոփոխութիւններ կրեց Յուստինիանոսի հրամանով 531ին։ փոփոխութիւններ՝ որոնց արդիւնքն զայրացած, կ'ըսուի թէ կայսրը դիմատել տուած էր իր Յանձնակառարը։ Այսուհանդերձ, չքեզօրէն զարդարուած հոյակերտ շինութիւն մըն էր ան։ Անոր խճանկարներէն մին կը պատկերացնէր երկրպագութիւնը Մոգերուն՝ պարակական հանդերձներով։ այս էր պատճառը որ, ինչպէս յետադային կը պատմուէր, Բեթղեհէմի տաճարին խճայեցին 614ի Պարսիկ արշաւողները։

Նոյնը ըրբն Արարտները 634ին, թէև այդ տարին Մնունդի արարողութիւնները չկատարուեցան հոն : Մասամբ դրաւուած իսլամներու կողմէ յաջորդող գարերուն, Խաչակիրներու շրջանին Տաճարը աւելի բախտաւոր օրեր ապրեցաւ, մանուանդ 1169էն ետք, երբ Մանուէլ Կոմինեսոս կայսեր և Երուսաղէմի Ամալրիկ և թագաւորին ծախսերով եկեղեցին զարդարուեցաւ նոր խճանկարներով և նըկարներով : Սալահէտտին 1187ին Բեթղեհէմը զբաւեց, սակայն Լատտին ծիսակատարութիւնը հինգ տարի վերջ վերահաստատուեցաւ շնորհիւ Սալլուրիի Արքեպիսկոպոս Հիւալերթ Ռուլթը թանքերուն : Խուարիդմեան աւերտմներու իրը հետեանք, 1244էն սկսեալ Բեթղեհէմ մտաւ անկումի շրջանի մը մէջ . Պելճիքացի ուխտաւոր մը, ծօն Զուալլար, 1568ին կը յիշառակէ որ Դաւիթի և Քրիստոսի հին այդ քաղաքէն մնացած էին միայն «քանի մը հիւղակներ բնակուած Արարտներէ, որոնք օրապահիկ մը կը ճարէին աշխատանքով — և ուխտաւորները սպաննելով» : Ասով մէկտեղ, Տաճարին մէջ կը սպասարկէին ոչ նուազ քան եօթը տարբեր կղերական միարանութիւններ, որոնց մէջ նաև Լատտին Ֆրանչիսկեաններ, որոնք ԺԴ-ԺԷ դարերուն իրենց դիրքը պիտի ամրացնէին : ԺԶ դարը Սուլը Երկրին մէջ սեփականութեան պայքարին սկիզբը կը հանդիսանայ . պայքար նախ Յոյներուն և Լատտիններուն, ապա նաև՝ Յոյներուն և Հայերուն միջն, և որ պիտի սաստկանար և տեէր Ժէ-ԺԹ դարերու բնթացքին, Հատնելու համար մինչեւ մեր ժամանակները : Բաւական փոփոխութիւններէ ետք, 1852ին գոյութիւն ունեցող իրավիճակը «սառեցուեցաւ» սուլթանական Փէրմաններով իրրե այսպէս կոչուած status quo, որ մինչեւ այսօր կը պահուի : Այսպէս, տաճարին մեծագոյն մասը Օրթոսոքա Յոյներուն սեփականութիւննէ, թէի մաս մը կը պատկանի Հայերուն : Մննդեան Այրը կը գործածուի Լատտիններու, Յոյներու և Հայերու կողմէ իրեւ հասարակաց պաշտամունքի վայր, մինչ Լատտինները պատասխանատուն են Մոուրի մատուեին : Իսկ քանի մը Հայկական խորաններ որոշ պարագաներու կը յատկացուին Ղատիններու և Օրթոսոքա Ասորիններու՝ յատակ պայմաններով : Պէտք է շեշտել որ եթէ Լատտիններ փոքր բաժին մը ունին տաճարէն ներս, այսուհանդերձ դէպի Ս. Այրը անցքի և մուտքի իրաւունքներ կը վայելին : Նաև, տաճարին հիւսիսային թեկն կից, անոնք ունին եկեղեցի մը, Ս. Կատարինէ, ինչպէս նաև վանք մը և գաւիթ մը : Յոյները և Հայերը ևս իրենց վանքերը ունին տաճարին հարաւային թեկն կից, այնպէս որ ներկայիս միայն արևմտեան ճակատը գուրսէն կարելի է տեսնել : Քանի որ Երեք եկեղեցիները Ծնունդը տարբեր օրերու կը տօնին, վէճերէ կատարելաւովէս կարելի է խուսափիլ, հակառակ որ Լատտին Աստուածայայտնութիւնը կը դուդագիպի Օրթոսոքա Խթումին, և Օրթոսոքա Աստուածայայտնութիւնը՝ Հայկական տօնին :

Ներկայ ժամանակներուն, հաստատուած սովորութեամբ, Բեթղեհէմի մէջ Ս. Ծնունդի և Աստուածայայտնութեան տօներուն կարգը մօտաւորապէս հետեւալին է .

Ա. 24 Գեկտեմբերին Լատտին Պատրիարքը, ոստիկանական ինքնաշարժներէ և հեծեալ ոստիկաններէ առաջնորդուած, կէսօրէն քիչ մը ետք կը ժամանէ տաճարին հրապարակը : Ան կ'ընդունուի կրօնականներէ, քաղաքային և դինուուրական իշխանութիւններու ներկայացուցիչներէ և թափօրուի եկեղեցի կ'առաջնորդուի : Հոնկէ, և հիւսիսային թեկն Երկարութեամբ, ան կը յառաջանայ հիւսիսային (Հայկական) խաչաթեկն և կ'անցնի յարակից Ս. Կատարինէ եկեղեցին՝ որ պաշտամունքի կեղրոնը պիտի ըլլայ : Կէսօրէ ետք ժամը 4ին կարճ արարողութեան մը համար ան թափօրուի Ծննդեան Այրը կ'իջնէ : Յոյները որոնց ձեռքն է տաճարին բանալին, երեկոյեան կը բանան մայր դուռը ժողո-

վուրդին առջև, և միաժամանակ Ս. Այրի Աստղի խորանին վրայ կը զետեղեն իրենց սրբանկարը:

Ժամը 10·25ին Ս. Կատարինէի մէջ առաւօտեան ժամերգութիւնը կը սկսի և կէս գիշերին, երբ Նահանգային Զինուորական Հրամանատարը ժամանած է, Պատրիարքական պատարագ մը կը ժամուցուի Կաթոլիկ հիւպատոսներու և անոնց ընտանիքներու ներկայութեան: Միաժամանակ, պատարագ կը ժամուցուի Ս. Այրի Մսուրի խորանին վրայ: Արարողութիւնները բարձրակէտի մը կը հասնին երբ առաւօտեան ժամը 2ին, Պատրիարքին կողմէ զիսաւորուած թափօր մը Ս. Կատարինէ եկեղեցին ելլելով և անցնելով հայկական խաչաթեւէն՝ հիւսիսային սանդուխներէն Ս. Այր կ'իջնէ: Արարողութիւնն ընթացքին, սորկաւադ մը Մանուկ Յիսուսի արձանը կը զետեղէ նախ Աստղին և ապա Մըսուրին վրայ, ու հոն կը միայ մինչև Աստուածայայոնութեան օրը: Պատրիարքը Ս. Կատարինէ կը վերադառնայ, բայց Ս. Այրին մէջ պատարագները կը շարունակուին մինչև այդաբաց, երբ քանի մը ժամերու համար կ'ընդմիջուին Յոյն պաշտամունքի համար, և յետոյ կը վերսկսին առաւօտեան ժամը 8ին և կը տեսն մինչև երեկոյեան ժամը հինգ: Մինչ այդ, առաւօտեան ժամը 9ին, Պատրիարքը կը պատարագէ Ս. Կատարինէի մէջ, որմէ յետոյ, Ֆրանչիսկեան հայրերու առաջորդութեամբ ուխտադնացութիւնն մը կը կատարուի դէպի Պէյթ Սահուուր՝ Հովիւներու Այրը: Բոլոր արարողութիւնները կը զիսուին ոչ միայն Տաճարին մէջ գտնուող հաւատացեալներէն, այլ նաև հրապարակին վրայ հաւաքուած բազմութիւններէ՝ հեռուատատեսիլի պաստառի մը վրայ:

Բ. 6 և 7 Յունուարի Յոյն Օրթոսոքս տօնակատարութիւնները աւելի մեծացուք են և հանդիսաւոր: Ասիկա հետեւանք է Յոյն ծէսի բիւզանդական նըկարագրին, մանաւանդ որ ամբողջ տաճարը և Ս. Այրը Յոյներու տրամադրութեան տակ է, ուր իրենց բազմաթիւ խնկարկումներն ու թափօրները կը կատարեն:

Տաճար իր հանդիսաւոր մուտքէն ետք, Յոյն Պատրիարքը եկեղեցիի կեղրոնէն կը յառաջանայ իր պաշտամունքի կեղրոնը՝ քաթոլիքոնը, ապա հարաւային սանդուխներէն կ'իջնէ Ս. Այրը, կը խնկարկէ Աստղի և Մսուրի խորանները և կը բարձրանայ հիւսիսային սանդուխներէն: Երբ թափօրը քաթոլիքոն կը վերադառնայ, երեկոյեան ժամերգութիւնը և պատարագները կը սկըսին, որոնց ընթացքին խնկարկումի թափօրներ կը կատարուին, առաջինը՝ դէպի Ս. Այրը՝ նոյնինքն Պատրիարքին կողմէ, իսկ միացեալները՝ եպիսկոպոններու, տաճարին մէջ յաւելուածական խնկարկումներով: Արարողութիւնները կ'աւարտին կէսօրէ վերջ ժամը 3·30ին:

Պէտք է յիշել այստեղ որ 6 Յունուարը միաժամանակ Խթում է Ղարիներու և Օրթոսոքս Ասորիներու համար, ինչպէս նաև Լատիններու Աստուածայայոնութեան օրը: Բարեքախտարար քանի մը ժամերու միջոց մը ասոնք կը բաժնէ Յոյներու զիշերային արարողութիւններ: Այս միջոցին է որ Ֆրանչիսկեան կիւսթուար առիթը կ'ունենայ Լատին Աստուածայայոնութեան պաշտամունքը կատարելու Ս. Այրին մէջ, ուրիէ, Մսուրէն առնելով, Մանուկ Յիսուսի արձանը կը վերադարձուի Ս. Կատարինէ: Նոյն միջոցին Ղարիները և Օրթոսոքս Ասորիները ևս իրենց արարողութիւններուն մէկ մասը կը կատարեն: Ոչ-Քաղկեդոնականներ, անոնք իրենց պաշտամունքը կը կատարեն հայկական եկեղեցին մէջ, Ղարիները՝ աւագ խորանին վրայ, իսկ Ասորիները՝ Թլիքառման խորանին: Երկու յարանուանութիւններու կրօնականները Ս. Այր կ'իջնեն երեկոյեան և ապա գիշերը՝ երբ Յոյներու զիշերային ժամերգութիւնը աւարտած է: Ոչ Ղարիները և ոչ ալ Ասորիները արտօնուած են իրենց սկիշն դատ եկեղեցական ուրիշ անօթ զործածելու հայկական խորաններուն վրայ:

Նոյնպէս, գինին, մոմերը և խունկը կը արամադրուին Հայերուն կողմէ, որոնք Ծնունդը այդ իրիկուն չեն տօներ:

Յունակոն զիշերային արարողութիւնները տօնուկէսին կը սկսին և կ'աւարտին առաւօտեան ժամը երեքուկէտին: Անոնք առաւելաբար քաթոլիքոնին մէջ տեղի կ'ունենան, ուր կը գտնուի պատրիարքական գահը: Հոնկէ թափօրները կը սկսին և հոն կը վերջանան: Կէսդիշերային արարողութեան, Պատրիարքը անձնապէս կը զիշաւորէ «մէծ թափօր»ը, որուն կը հետեւին Նահանգային Զինուորական Հրամանատարը, Բնեթզեհէմի Քաղաքապետը, Յոյն Հիւսատոսը, Եպիսկոպոսներ, վարդապետներ, սարկաւողներ, երգչախումբը, մոմակիրներն ու ղրօշակիրները, բոլորն ալ առաջնորդուած բարապաններէ: Թափօրը Ս. Այր կ'իջնէ Հարուային սանդուխներէն, գուրու կու գայ Հիւսիսայինէն և Հիւսիսային, արևմտեան ու Հարաւային թիւերէն յառաջանալով կը վերադառնայ քաթոլիքոն: Ասիկա, մանր փոփոխութիւններով, քանի մը անզամ կը կրկնուի: Օրթոսոք ծխակատարութիւնը շատ բարդ և տպաւորիչ է, և իր բազմածալ խորհրդանշանութեամբ կ'աղջէ զգայարաններուն և ուղեղին վրայ: Այսպէս, Հաւաքուած Հաւատացեալներուն Հետ վարդապետներուն խառնուիր կը նշանակէ Բանին իջնելը մարդկութեան, խնկարկութը միմիայն մէծարանքի և նուիրաբերութեան արարք մը չէ, այլ զէպի երկինք աղօթքի ուղարկում: Արարողութեան կը յաջորդէ Պատրիարքին կողմէ մատուցուած պատարագ մը քաթոլիքոնին մէջ, որուն կը հետեւին թափօրները:

Գ. Հայերը Ծնունդը կը տօնեն 18 և 19 Յունուարին: Ինչպէս յիշուեցաւ, անոնց բաժինը Տաճարին Հիւսիսային բաժնին մէջ է, ուր, յատկանշականօրէն, այս առիթով խորաններ կը բարձրացնեն, թերես այսպէս կրկնելով Հին, նախա-կոստանդինեան սովորութիւնն մը: Իրենց բաժնին և Ս. Այրին մէջ անոնք իրենց Պատրիարքին համար ժամանակաւոր գահէր կը զետեղին: Քանի որ Հայերու բաժինէն կ'անցնի Լատիններու ճամբան զէպի Ս. Այր, այս վերջինները քսանչորս ժամուան Համար կը դոցեն զէպի Ս. Կատարինէ տանող գուռը, և Հայերը կը ստանձնեն Ս. Այրը՝ Աստղի խորանին վրայ զետեղիլով նրկար մը և ուրիշ սրբազնա անօմները: Պէտք է աւելցնել որ այս տոիթով բարձրացուած խորաններէն մէկ կը մնայ յաջորդ ինը օրերու ընթացքին ալ:

Հայոց Պատրիարքը, որ Բեթղեհէմ կը հասնի ժամը 11ին, Յոյն և Լատին պատրիարքներուն ընծայուած նոյն պատիւններով կ'ընթունուի: Տաճար իր հանդիսաւոր ժուտքէն ետք, ան կը յառաջանայ եկեղեցիի կեղրոնէն և Ս. Այր կ'իջնէ հիւսիսային սանդուխներէն: Երեկոյեան ժամերգութիւնը կը սկսի ժամը 2·30ին, որուն ընթացքին խնկարկութեան թափօր մը Ս. Այր կ'իջնէ, ուր յետոյ պատարագ կը ժամանցուի գահին վրայ բազմած Պատրիարքին ներկայութեան: Ժամը Եին կը ժամանէն, իրենց Աստուածայայտնութեան տօնը պաշտելու քաթոլիքոնին և Ս. Այրին մէջ: Ազա անոնք տաճարին դուռը կը բանան Հայ Հաւատացեալներուն համար:

Հայկական զիշերային ժամերգութիւնը կը սկսի ժամը 10·30ին զէպի Ս. Այր թափօրներու սկիզբը և աւարտը Հայկական հիւսիսային բաժնի եկեղեցին է: անոնք Ս. Այր կ'իջնեն և անկէ կը բարձրանան հիւսիսային սանդուխներէն: Ժամը 11·50ին Երուալզէմէն կը ժամանէ Նահանգային Զինուորական Հրամանատարը, որմէ վերջ պատարագ կը մատուցուի: Ս. Այրին մէջ խնկարկումի մը ընթացքին Ս. Ակիհ մը կը փոխազգութ հոն և կը զետեղուի Աստղի խորանին վրայ, ուրիշ կը վերցուի ուրիշ ինկարկումի մը ընթացքին: Վերջին պատարագ մը Ս. Այրին մէջ կը մատուցուի տաճառական ժամը 4·30ին և կը

վերջանայ ժամը 6ին, որտէ ետք Ա. Ալյոչն և Հիւսիսային բաժինէն կը վերցը-
ւին գործեթը, զահերը ևայլն, և Լատինները կը բանան դէպի Ա. Կատարինէ տ-
աղնորդող իրենց դուռը:

Տօնին նշանակութիւնը որոշ կ'երեսի Ծննդեան մեղեդիին մէջ, որ կը
սկսի.

«Նոր ծաղիկ այսօր բըղիվ յարմատոյն Յեսսեայ,
Եւ որդի Դաւթի ծնանի Որդին Աստուծոյ»:

Մինչ տաղը կը շարունակէ.

«Այսօր տօն է սուրբ Ծննդեան, աւետիս.

Տեան մերոյ և յայտնութեան, աւետիս:

Այսօր արեւ արդարութեան, աւետիս.

Երևեցաւ ի մէջ մարդկան, աւետիս»:

Եւ աւելի յետոյ.

«Այսօր ձայնն հայրական, յերկմից իշխալ հանոյական
Սիրեցելոյ Որդուոյ վկայ. . .

Այսօր Սուրբ Հոգին իշխալ, աղաւնակերպ և նիւթեղէն,

Հրեղէն լեզուօֆ յայտնեալ ի ժեզ, սուրբ Յորդանան»:

Խ. ՎԱՐՏԻ

ՀԱՅՈՒԹԻՒՆ

ԺՆՈՒՆԴԻ ԳԻՇԵՐ



Ծնունդի գիշեր, աստղերն երկնեֆին
Աչքերն են կարծես Ամենակալին,
Որ հակառակ մեր մեղքերուն՝ սիրեց
Աշխարհն ու մարդիկ՝ սիրով կարողին:

Ծնունդի գիշեր, աստղերն երկնեֆին
Բիւրեղացումն են Տիրոջ արցունեֆին,
Որ պարտէզին մէջ Ան օր մը թափեց
Մաքրելու համար մարդերու հոգին:

Ծնունդի գիշեր, աստղերն երկնեֆին
Դուներ են բացուած, ուրկէ կը հոսին
Տիրոջ շնորհներն՝ կայլակ առ կայլակ
Վրան մեղսակուռ այս տիեզերքին:

ՏԱՐՏԱՄ ԽՈՅԵՐ

Երբ օր մ'յանկարծ կենայ սրտիս մեքնան,
Բի՛ւր երազներս ալ անկատար երբ մնան,
Հոգիս յայնժամ օրերուն վրայ իր անցեալ
Պիտի կրնա՞յ, պիտի ուզկ՞ ափսոսալ . . . :

Կեանեֆիս վերջին վարագոյրը երբ իշնէ,
Հոգիս Տիրոջ առջև ինքիլիք երբ գտնէ,
Պիտի՞ արդեօֆ հրճուանեն ըլլայ իր բաժին,
Թէ սոսկումով պիտի դիմէ Ոչինչին. . . :

Գ. ՃԱՐՏԱՐ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

169. ՄԻԱԼԻ ՈՐՈՌԻԹԻԻՆ. Մարդկութեան վարդապետութիւնը Քրիստոսի վրայ իրասպէս տարբերեալ երկուք չընդունիր : Ու երբ Քրիստոսի համար կ'ըսենք կատարեալ Աստուած և կատարեալ մարդ, երկուքը զատ զատ չենք իմանար, այլ կը հասկնանք երկու կատարեալներէ միասնական ենթակայութիւն . որովհետեւ կատարեալ է ենթակայութիւնը Աստուածոյ Որդուոյն անձին և բնութեան մէջ, և կատարեալ է մարդկութիւնը մարդուն Որդուոյն անձին և բնութեան մէջ, բայց Աստուածոյ Որդին և մարդուն Որդին այնպէս միաւորուած են իրարու հետ, որ Քրիստոս մի է և կատարելապէս մի՝ երկու կատարեալներէ :

Աստուածութեան՝ մարդկութեան հետ այդ միաւորութիւնը անհասանելի է մարդկային մտքին համար, և խորհուրդ խորհրդոց . այս պատճառու անօգուտ է հետամուռ լինիլ արարածական բնութեան մէջ անոր յարմար բացարութիւններ կամ ստուերական օրինակներ գտնելու : Երբ աննիւթ հողիին՝ նիւթական հոգիին հետ միաւորութիւնը, զոր կ'ընդունինք իրքի իմաստասիրական ճշմարտութիւն, անմեկնելի է մեր մտքին, երբ մեր մէջ եղածը չենք կրնար բացարել և պարզաբանել, ինչպէս պիտի գիտնանք Քրիստոսի մէջ եղածը : Քրիստոնէական կրօնքին ճշմարտութիւնը իր վարդապետութիւններուն ճշմարտութեամբը կը հաստատուի . ու մարդկութեան վարդապետութեան ճշմարտութիւնը հիմնական է քրիստոնէական վարդապետութեան համար : Քրիստոնէական գիտութեան համար բաւական է այսքանը, անոր կը մնայ միայն մեկնարանել թէ ինչպէս պէտք է իմանալ այդ վարդապետութիւնը աստուածային յայտնութեան անստերիւր ցուցմանց համեմատ : Մենք պէտք է բաւականանք գիտնալով միայն թէ Աս-

տուածոյ համար ամէն բան հնարաւոր է, և թէ ինչպէս հիմնալի են անոր բոլոր գործերը, և աւելի ևս անիկա՝ որ սքանչելիք է սքանչելեաց :

170. ՆԵՍՍՈՐԱԿԱՋՆՔ. Միաւորութեան կամ ի Քրիստոս միաւորեալ մի բնութեան խորհրդ նպատակակէտը և հիմնակէտը եղաւ Եփսոսու Ս. Ժողովին որոշումին, գումարուածութեան կողորութեան դէմ :

Նեստոր, Եփրատացւոց Գերմանիկէն, Կ. Պոլոսյ Աթոռը նստելով 428ին, առիթ համարեց տարածելու իր մոլորութիւնը, որով կ'ընդունէր Որդուոյն Աստուածոյ աստուածութեան կատարելութիւնը, Որդուոյն մարդոյ մարդկութեան կատարելութիւնը, բայց և այնպէս իրարմէ անկախօրէն զործող կը նրկատէր զանոնք, այնպէս որ՝ ինչ որ մարդկութեան էր, չէր զործեր Որդին Աստուածոյ, և ինչ որ աստուածութեան էր՝ չէր զործեր Որդին մարդոյ : Ան տակաւին կ'ըսէր թէ կատարեալ մարդուն մէջ եկաւ բնակիլ կատարեալ Աստուածը : Բայ Նեստորի, կատարեալ մարդը Յիսուս էր, իսկ կատարեալ Աստուածըն էր Բանն Աստուած : Յիսուս Քրիստոս Մարիամէն էր, որով Մարիամ Աստուածածին չէր, այլ Քրիստոսածին . Քրիստոս ինք ոչ Աստուած, այլ՝ Աստուածակիր . ու Բանն Աստուած ոչ էր մարդացեալ, այլ՝ մարդուն մէջ բնակած :

Ասոնք էին Նեստորի ճշմարտութիւնները, ու երբ յանձն կ'առնէր զործածել Աստուածածին և մարդացեալ Բան անունները, անոնց փոխարերական իմաստներ կու տար՝ համարնակութեան և ոչ միաւորութեան ի նպաստ : Կիւրեղ Աղեքրանդրիոյ Հայրապետը ախոյշեան կանգնեցաւ ընդդէմ Նեստորի, և անոր առաջարկեց տասներկու գլուխ ուղիղ վարդապետութեանց, զորս մերժեց Նեստոր

և ինքն ալ զրեց տասներկու զլուխ մոլորութեանց : 431ին զումարուեցաւ Եփեսոսի տիեզերական ժողովը , որ մերժեց Նեստորի վարդապետութիւնը և նզոմից Նեստորը : Եփեսոսական դաւանութեան հիմք այն էր թէ Քրիստոս մի է կատարեալ միութեան միառութեամբ , թէ և երկուք ըլլայ , ու Քրիստոսի մէջ եղած այդ միութիւնը անուանուեցաւ անձնաւորութիւն կամ ենթակայութիւն , և իր կնիք բանից հաշակուեցաւ Քրիստոս մի անձն և հաստատուեցաւ թէ Մարիամը պէտք է անուանել Աստուածածին :

171. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՅԱՏԿՈՒԹԵԱՆՑ . Եփեսոսական դաւանութեան Ս. Գիրքէն Հաստատութիւններն են այն տեղերը , որոնց մէջ ուղղակի աստուածային ենթակային կը յարին աստուածային զործողութիւնները կամ մարդկային յատկութիւնները , և մարդկային ենթակային կը յարին աստուածային զործողութիւնները կամ ստորոգութիւնները : Արդ , այս փոխարքածութիւնն է դոր աստուածաբանները կը կոչեն Հաղորդութիւն կամ փոխանակութիւն յատկութեանց , որ և կը կաղմէ ի Քրիստոս միութեան հիմքայնակէս որ ինչ որ աստուածային է՝ հաւասարապէս կը ստորասուի ու կը բացասուի պատշաճապէս՝ միենոյն Քրիստոսի վրայ :

Ասոր համար է որ աստուածութեան և մարդկութեան վրայ խօսած ատեն , զաղափարաց տրամարանական բաժանում է միայն որ կ'ենթակրենք , և ոչ թէ իրական բաժանում ենթակայութեանց : Ենթակայութեանց այսպիսի բաժանումը մոլորութիւնն էր Նեստորի , բայ որուն արիչ էր մարդը և ուրիշ Աստուած . ինչ որ մարդունն էր՝ մարդը կը զործէր զայն , և ինչ որ Աստուածոյն էր՝ Աստուած , որով ի սպաս կը ջնջուէին փրկարգործութեան և մարդեղութեան աստուածային անօրինութիւնները :

Ս. Գրոց մէջ շատ են վիտյութիւնները , զորս մէր հայրերն ու վարդապետները խնամով հաւաքած են . անոնցմէ մի քանին յառաջ կը բերենք :

Պօղոս կը գրէ . «Զի եթէ էր ծանուցեալ , ոչ արդեօք զէքըն փառաց ի խաչ հանէին» (Ա. Կորնթ . Բ. 8) :

Պետրօս կը գրէ . «Եւ զառաջնորդ կենացն

սպանիք» (Գործք . Գ. 15) , ուր ուրիշ թարգմանութիւններ աւելի ճշգագոյն ունին՝ «ըղկեղինակ կենաց» կամ «զառուիչն կենաց» :

Պօղոս կը գրէ . «Հոգուել գողովուրդ Տեսորն , զոր ապրեցոյց արեամբ իւրով» (Գործք . Բ. 28) , այսինքն՝ արեամբ Աստուածոյ :

Քրիստոս իր մասին կ'ըսէ . «Յատաջ քան գլինին Արքահամու ևմ ես» (Յովհ . Բ. 58) :

Պօղոս կը գրէ . «Առաքեաց Աստուած զմրդին իւր՝ որ եղել ի կնոջէ» (Գաղ . Դ. 4) :

Քրիստոս կ'ըսէ զարձեալ . «Եւ ոչ ոք ել յերկինս եթէ ոչ որ էջն յերկնից՝ Որդին մարդոյ՝ որ էն յերկինս» (Յովհ . Գ. 13) :

Ու ամէնուն վրայ Պօղոսի խօսքը . «Զայն խորհեցի խրաքանչիւր ոք ի ձէնջ , որ և ի Քրիստոս Յիսուս , որ ի կերպարանս Աստուածոյ է , ոչինչ յափշտակութիւն Համարեցաւ զիիներն հաւասար Աստուածոյ , այլ գանձն ունացնացոյց՝ զկերպարանս ծառայի տոեալ , ի նմանութիւն մարդկան եղեալ , և կերպարանօք դաեալ իրբ զմարզ : Խոնարհեցոյց զանձրն , լեալ հնագանդ մահու շափ և մահու խաչի» (Փիլ . Բ. 5-8) :

Եւ այս բոլորին կնիքն է Աւետարանին խօսքը . «Եւ Բանն մարմին եղել» (Յովհ . Ա. 14) :

172. ՓԱՍՏ ԱԿԱՆԴՈՒԹԵՆՔ . Աւենդութենէն քաղուած վիատը Հաստատուած է վրկայութիւններովը բոյոր Եկեղեցիներուն և խօսքերովը բոյոր ժամանակներու և տեղերու Ս. Հայրերուն , կնքուած է Նեկիսական և Կ . Պոլսեան դաւանութեանց Հանգանակներովը , և բնդուէմ Նեստորի Եփենոսուական դաւանութեան աշխարհահռչակ վաւերականութեամբ ամրացած , և տանց մէկու մը զիմազրութեան բոյոր քրիստոնեայ Եկեղեցիներէն ընդունուած և մեր սուրբ վարդապետներէն ճոխարանուած , որ կոյրերուն իսկ աչքին կը զարնէ : Արժան էր անջուշանոնց քաղուածքք աւանդել այսուեղ , և թէ ժամանակի սղութիւնը չափակը զմեզ բաւականալու՝ տալով միայն ճաշակը այն խնդիրներուն՝ որոնք յուղուեցան մարդեղութեան խորհուրդին մասին :

173. ՄԻԱԲՆԱԿՆԵՐԸ ԵՒ ԵՐԿԱԲՆԱԿՆԵՐԸ . Ինը մեր խօսքը չիերջացուցած , բացատ-

րենք դէմ իմաստը այն խնդրին որ կը յուղ-
ուի ի Քրիստոս բնութեանց այդ մասին եղած
զաւանութեան ձեւին վրայ:

Յայտնի է թէ բնութեանց մասին տարրե-
րութիւն կայ մեր Առջապատ Եկեղեցին և
Օքթոպաք ու Կաթոլիկ Եկեղեցիներուն մի-
ջև, և Քաղկեդոնի ժողովին ընդունելութեան
խնդրը ուժի պնդութեամբ յուղուած է Յու-
նաց և Լատինաց կողմէ, որոնք՝ ըստ վկա-
յութեան պատմութեան, արտաքին միջոցներ
այ կիրարկած են երբ և ուր որ գօրութեան
բաղու կը կամ յարաբերութեան պարագանե-
րը ներած էն: Մենք հոս բուն խիլ Քաղկեդոնի
ժողովին մասին չէ որ պիտի խօսինք, զի ա-
տիկա Եկեղեցական պատմութեան կը պատ-
կանի: այլ, պիտի պաշտպաննենք միայն մէր
Եկեղեցւոյ ողջափառութիւնը, որ կը խորցի
ի Քրիստոս երկու բնութիւն լսելէ:

Հարեկ կը Համարենք աւելցնել նաև որ մեր
Եկեղեցին թէ կը խորչի երկու բնութիւն լը-
սելէ, բայց բնաւ մօտ չէ Եւտիքեսի տեսու-
թեան, զոր ոչ միայն կը դատապարտեն մեր
բոլոր վարդապետները, ոյլի Առջապատ Ե-
կեղեցին իր պաշտոնից ձեռնադրութեան ա-
տեն կը հրամայէ անոնց Հանդիսաւորապէս ո-
նդովել զայն՝ այսինքն Եւտիքեսը, Սարէի,
Արիոսի, Մակեդոնի, Նեստորի և ուրիշ հերե-
տիկոսներու հետ:

Եւտիքես Կ. Պոլսեցի վանահօր մալորու-
թիւնը, ինչպէս զիտենք պատմութեանէն, ե-
րեան եկաւ 448ին և իրաք թէ յառաջացաւ Նես-
տորի դէմ Հակառակ սկզբունք մը պաշտպա-
նելու իր բերումէն, Նեստորի՝ որուն դէմ մա-
քառողներէն մէկն այ ինքն էր եղած:

Նեստոր տարրերեալ և բնակակից երկուքի
կը բաժնէր զՔրիստոս. Եփեսոսիան զաւանու-
թիւնը մի միակ Քրիստոս ընդունելուն,
խնդրը կը մնար Հաստատելու մէջ թէ ի՞նչ
բանի վրայ Հաստատուած կ'ըլլար միութիւնը
և ինչպէս կատարեալ կ'ըլլար միաւորու-
թիւնը՝ որպէսպի Հարեկ ըլլար թէ միութիւնը
ընդունիլ և թէ միենոյն ատեն Քրիստոսի
մէջ՝ աստուածութիւնը և մարդկութիւնը:

Ինչպէս այս քանի մը բառերէն կ'երկի,
խնդրը այլևս զերբնական ճշմարտութեան
գոյութեան վրայ չէր, այլ զերբնական ճշ-
մարտութեան բացատրութեան վրայ:

174. ԵԽՏԵՐԱԿԱՆՔ. Ճշմարտութեանց
զոյութիւնը հաստատուած էր. Երբորդու-
թիւնը՝ Նիկոր և Կ. Պոլիս, մարդկութիւնը՝
Եփեսոս: Անկէ վերջ յուղուիլ սկսած խնդի-
րը մարդկութեան բացատրութեան խնդիրն
էր: Կ'ըսենք ատիկա, որպէսպի յայտնի ըլլան
և Քրիստոս բնութեանց վրայ եղած խնդրին
տեսակն ու զօրութիւնը:

Եւտիքես, բացատրելու համար Քրիստո-
սի մէջ աստուածութեան և մարդկութեան
միաւորութիւնը, կ'ըսէր թէ միաւորութեանէն
առաջ երկու էին բնութիւնները Քրիստոսի
մէջ, իսկ միաւորութեանէն ետք միայն մէկ բը-
նութիւն եղան: Ու բացատրելու համար այդ
միավայնականութիւնը, յառաջ կը բերէր հա-
մատարած ծովին մէջ ինկած կաթիլ մը մեղ-
րին օրինակը: Ծայլ աստուածութիւնն էր, և
կաթիլը՝ մարդկութիւնը. ու այսպէս կը կոր-
ուուէր ու կը ջնջուէր մարդկութիւնը աստ-
ուածութեան մէջ:

Այս բացատրութեան մէջ չատ սխալներ
կային:

Դամի՝ միաւորութեանէն առաջ երկու բնու-
թիւններ ընդունիլը, որ Նեստորականութիւնն
է, զի այդ կերպով աստուածութեան հետ
միաւորուելէ առաջ մարդկային բնութիւնը
ինք առանձինն գոյութիւնն ունեցած կ'ըլլայ,
ինչ որ մերժելի է՝ զի ուղղափառ հաւատքը
չի ճանչնար ոմն Քրիստոս մարդ որ գոյակ ե-
ղած ըլլայ անկախարար և Բանին մարդկու-
թեանէն յառաջազոյն:

Երկրորդ, «յետ միաւորութեան» ըսելը
ցոյց կու տայ իրարու դէմ կեցած երկու նա-
խապէս զոյութիւն ունեցածներ, այնպէս որ
միաւորութեանէն առաջ ժամանակ մը կամ մի-
ջոց մը Քրիստոսի աստուածութիւնը և մարդ-
կութիւնը զոյաւորապէս եղած ըլլան առանց
միաւորութեանն, ինչ որ զարձեալ Նեստորա-
կանութիւնն է:

Երրորդ՝ միաւորութիւնն ետքը երկու
բնութիւնները մի միակ եղած ըսելը, ծովին
ու կաթիլը օրինակ բերելով, կորսնցնել և
ջնջել է մարդկութիւնը Քրիստոսի մէջ. ու ա-
տիկա Ալաղինարեան մոլորութեան վերա-
կանդնումն է:

Չորրորդ՝ մարդկութիւնը կորսուած ըն-
դունելով, ընդունած կ'ըլլանք թէ չարչարա-
նաց և ճահուան ենթարկուողը ուրեմն մար-

դր չէ, ինչ որ Աստուածաշարչաբութեան մուրութիւնն է:

Այդ մոլորութեան հետեանքն այն կ'ըլլար որ Քրիստոս իրապէս մարմին առած չէր ըլլար, ինչ որ կը նշանակէ ուրանալ Քրիստոսի շնորհօք արդարանալը, որուն մասին անքա՞ն կը խօսուի մեր կրօնական գրականութեան մէջ: Ու բոլոր այս մոլորութեանց համար իրաւամբ է որ մեր Ռւղղափառ Եկեղեցին նզովեց և կը նզովէ Եւտիքեսը, իր բոլոր ժանու մոլորութիւններով միասին:

175. ՄԵՐ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆՆԸ. Որովհետեւ մէնք ալ կը նզովենք Եւտիքեսը, ինչպէս նզովեց զայն Քաղկեդոնի Ժողովը, որ Մարկիանոսի օրով զումարուեցաւ 451ին, շատեր սովորութիւն ըրած են անձ և բնութիւն բառերուն թիւրիմացութեան վերագրել բոլոր այն տարածայնութիւնները որոնք կան մեր Ռւղղափառ Եկեղեցին և Օրթոսոք ու Կաթոլիկ Եկեղեցիններու քաղկեդոնական զաւանութեան միջեւ, և Հաւաստել թէ մի բնութիւն ըսերով մի անձ կը հակցուի, և թէ հետեւրար այդ թիւրիմացութեանէն զուրս պէտք է երկու բնութիւններ ըսել Քրիստոսի մէջ:

(Դար. 18)

Բայց մէնք կը կարծենք թէ անկէ աւելի կը պարունակէ և կը պահանջի մեր Ռւղղափառ Եկեղեցւոյ զաւանութիւնը, երբ կը խորշի երկու բնութիւն ըսելէ Քրիստոսի մէջ: Բայց որպէսզի բացայայտ երեխ ուղղափառ վարդապետութիւնը, Հարկ է կանխաւ տալ ինչ ինչ բառերու իմաստն ու բացարութիւնը: Երրորդութեան խորհուրդին վրայ խօսած ատեն բացարեցինք բնութիւն և անձ բառերը: Բնութիւնը էութիւնն է՝ նկատուած իրքի սկիզբ զործողութեանց, իսկ անձը՝ բանական ենթակայութիւնը, որ է էութեան կամ բնութեան կերպաւորութիւնը: Ինչպէս Երրորդութեան վրայ խօսած ատեն չէինք կրնար խօսիլ իրաց Հնարաւոր վիճակին մասին՝ որովհետեւ Աստուած Հարկաւոր էտակ է ի ինչ որ Հարկաւոր է չի կրնար մնալ լոկ Հնարաւորութեան վիճակի մէջ, նոյնպէս և Քրիստոսի մասին խօսած ատեն չենք կրնար խօսիլ լոկ Հնարաւորութեան վիճակի մասին, որովհետեւ ուղղափառ վարդապետութիւնը կը նկատէ Բանն Աստուած մարդացած, և կ'ուսուցանէ ևս թէ չէ եղած ժամանակ մը երբ մարդ Քրիստոսը փառաւորուած չըլլայ Քրիստոս Աստուծոյ հետ:

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊՈ. ՕՐՄԱՆԵԱՆ

ԳՐԱԿԱՆ

ԳԻՐՔ ԴԻՀՑԱՆԵՐԳՈՒԹԵԱՆՑ

ԿՈՍԱՆ ԶԱՐԵԱՆ

Յուզումով է որ հրատարակութեան կու տաճը հատուած մը Կոստան Զարեանի «Գիրք Դիցազներգութեանց» անտիպ հատորէն: Զարեան արդի հայ գրականութեան տիտաններէն է, և իր «Գիրք»ը կը պարունակէ այն ամենը ինչ որ գեղեցիկ և բացառիկ էր բազմատաղանդ քերթողին մօտ: Իր կարապի երգը այս մէկը, ուր հապնեափի հովը ամբողջ գիրքին կու տայ անկոփի, կիսաւարտ, բարբարոս գեղեցկութիւն մը: Ինք իսկ արդէն, «Առաջաերգ»ին մէջ տագնապանքով կը խոստովանի:

«Ճամբիս ծայրին եմ: Վերջին հրաժեշտ»

Նշան է անում ապրած օրերին»:

«Գիրք Դիւզաններգութեանց»ը ապահովաբար լրումը պիտի ըլլար քերթողի ստեղծագործական կարողութիւններուն, Վերջին հիանալի վերաբռնկումը Զարեանի տաղանդին, անոր՝ որ մեր գրականութեան ընծայած էր «Օթրի պսակը» և «Տատրագումի հարս»ը, «Նաւը լերան Վրայ» վեճն ու տակակին այլ երկեր:

Սակայն, «չվերանայուած» ըլլալու իր հանգամանքով հանդերձ, «Գիրք Դիցազներգութեանց»ը երևոյթ մըն է արդի հայ գրականութեան մէջ, արժանի այն տեղին ու ճանաչումին՝ զոր անշուշտ իրեն պիտի ընծայեն մեծ քերթողին տաղանդն ու արուեստը։ Ամբողջ գործը կը բաղկանայ աւելի քան երեք հարիւր մեցեագրուած մեծադիր էջերէ, և փառարանութիւն մըն է Հայ ցեղի առաքինութիւններուն և Հայաստանի արինաներկ հողին ու հիանալի բնութեան։ Զարեանը յատկանցող ջղուտ ոճը և հայ լեռներուն ապառաժեայ կարծրութիւնը ունեցող լեզուն արտակարգ գեղեցկութեան կը հասնին հոս, ուր նորագոյն և արուեստով լի փոխաբերութիւններն ու ժողովրդական միամիտ ասացուածքները իրարու հետ սերտ միութիւն մը կը ստեղծեն, ամբողջ գործը կեանքով և յոյզերով թոթուացնելով։ «Կահագն», «Ասացուած ցոլամարտ Մհերի համար», «Հայկ դիցազն», «Հատուած Տիգրան Սեծի թուելեաց երգից» քանի մը խորագիրներ են գիրքը կազմող բանաւեղձական պատմումներէն, որոնք մեր պատմութեան սկզբնական շրջանը առաջ իբրև հոդ-հիմ՝ կը կառուցանեն այն հիանալին որ Հայ ժողովուրդ կը կոչովի, իր հայրագրի լոյս ու մութ գիծերով, հայրենի հողի իր անմարելի կիրառ։ Իր պարումներով և կեանքով։

Ստորև ներկայացուածը հատուած մըն է «Գիրք Դիցազներգութեանց»ի մուտքեն, զոր բանաստեղծ «Ալոածերգ» վերնագրած է:

۱۰۸

Հոգու խորհուրդը թաղուած է լոյսի՝
Լոյսի խաւարի շերտերի տակը:

Ինձ միտք մի տաճեց. ո՞վ պիտի քաղի
Դարերի ետև թագնուած կրակը
Կորած աստղերի, որոնց շողբերով,
Կապտաւուն և մով,
Հիւսուել է փարթամ կեանքը մեր ցեղի
Եւ գծուել ճամբան անդուզ դէպքերի:

Երբ ես, մոլորուած մէջս մաքառող
Ստուերներում յուշի, բարձրացայ մի բլուր
Եւ բլան վրայից շուրջս դիտեցի -
Ինձ շրջապատեց մոգութեամբ փոռուած
Աշխարհ մի անանց:

Հայոց լեռների

Մարդու ի՞նչ է որ, եթե անդադար չի փոխանակում

Աւելի հարուստ հոգու զանգի ում :

Եթե համար առաջ առաջ

ବ୍ୟାପକ ବ୍ୟାପକ ବ୍ୟାପକ

ANSWER The answer is 1000.

Չի Շետում ծովի շառաչին առատ -
Եթէ իր ձեռքի բարդ աշտանակի եօթնաջահերը
Չի յանձնում ցախին որոնումների
Եւ տարրալուծուող ժամերի միջից
Չի քաղում մտքի վառ խոյացները:

3

Ճամբիս ծայրին եմ: Կերջին հրաժեշտու
Նշան է անում ապրած օրերին:
Հարաւից հիւսիս տարածուող բացը
Թևը բախում է հորիզոններին:
Անծայրածիրը հրդեհով լցուած իր բազուկները
Կրծքին է սեղմել
Եւ իր սահմանը ծածկուել է վշտի շնչահեղձ մուլթով:
Օ, սիրու անհանգիստ, թող փայլակների կերպացումները,
Պաշտամունքային նշանակները,
Մոխրագոյն քարէ սկահակները,
Սեպաձև փորուած յուշարձանները,
Խաչը, սուաստիկան, ցանքի ծիկերը, ոճմ և նումացառ
Հացահատիկի դեղին բոցերը,
Տատրակի երգը, աստղերի պարը,
Իմ ուղը մատով և երկու բոյլով
Բերանը կապեն սանդարամետի
Եւ վերադարձիս քայլերի առջև դահուս ին պոճան
Բանան երկաթէ դուռը երազի:

Թաղենք ցորեկը հազար մետաղով
Զայնող գիշերուայ ծածնուած խորհրդում
Եւ առաջանանք:

Բագինի առջև
Մի աքլոր մորթենք: Քղամիդը նետենք
Մեր մերկ ուսերին և մեր ճակատը
Վարագի գրոհով ցցենք երկնեցին:
Ահ, իմ սրտում ուզում եմ սեղմել
Համայն կերպերի սերմարջիջը:
Ուզում եմ խփել մոգութեան կնիքը
Կեանքի բաց կրծքին. ուզում եմ լինելի ցողման ճաւզում
Ամրողականի հրավառուած թել:

Մահը վստահ է: - ուստի Այլառաց միութ նոռամն ԻՇ
ցղձմանամեջ՝ **ԱմէՇ մի հերոս** դադ մառն ո՞յ կած

Իշնում է վիճը
Եւ հանդիպում է ուրուականեթին: Առաջ բարձրացնելու ժ
Իր յուզումների եռացող գինեն: Ապա ուղան նորաց հ
Նա բաժնում է և սկիհը ձեռքի
Նետում անյատին: Ապա քայլում է
Մրրիկով ծեծուած մտքի վայրերում
Եւ մարառում է՝

Բախելով սրտի հուժկու վահանը
Խաւարում շաշող պղինձ թուրերին -
Որպէսզի բացուի թագնուած սահմանը
Եւ վերածնուի տագնապող հոգին:

Իշխում եմ վիրը:

Ինձ բոլորում է նախ խոր մթութիւն: Առ ճա ոռփ նեաստ! Սուացանում եմ Եեղ ճամբէքներով, Ճամբէքնասոյ պատ Չեմ կարող յիշել ինչը ան ժամանակ: Յամա միւսանձաւուն Եւ, յանկարծ - ի՞նչ հրաշը- երազի եզրից Կամաց բացում է մի վեհ տեսարան:

Մեծի մի տաճար. զարդարուն, հարուստ եւ աստվեռակեռա:

Բառուած սեղաններ:

Նրանց շուրջը շարուած ճոխի բարձրագահեր,
Որոնց ծածկոցը՝ ոսկիով հիսուած՝
Անօթների հետ բոցավառում է,
Դահլիճը լցնում շող ակունքների
Պապդանքներով և սպասների
Եւ սկիների պերճ քանդակներով:

Արդեօք կոչո՞ւնք է: Յուզուած աշքերս
Շրջում են չորս կողմ, բայց մարդ չեմ տեսնում:
Ո՞ւր է կոչնատէր իշխանը խըրոյսն
Կամ թագաւորը՝ տէր խրախութեան:
Ո՞ւր են պճնազգեստ նուիրակի ձայնով
Կոչուած հիւրերը, ո՞ւր են լուսափառ նոյցնու զար հզման
Եւ հանդիսաւոր մեր տիկինները:

Լապտեր, կանթեղներ, բազմաստեղ փայլով,
Լոյսեր են սփոռում շքեղ այս վայրում: ճառուած ընդունման
Գունավառուում են անթիւ ծաղիկներ շաղը, լուցող այսօնին
Ասպազան, յասմիկ, մեղրութ և նարգես, Յա Խորուսան Յ
Հորուտ և մորուտ, համասպրումն, այս առջարադ, առ անյս
Որոնց բուրումն - Ծինականին օճն գաւաճ ուա Եթ եղան
Վեր է սլանում զգիսիչ և նուրբ:

Դիմու ուն լուսուս ձմել Ճ Խորուանց
Եւ մինչ զարմանքով նայում եմ լիիկ, - Խորմիյ ճառուց
Մէկ էլ, երկարած դահլիճի խորքից, անդուր ճողմիյրա ուն
Լսում է զնզող փանդիդի մի ձայն: Ժուղու ցըդու Շամելուն
Վազում եմ այն կողմ - օ՛, ժամ բախտաւոր: Ժուայ լուս ու
Այնտեղ նստած են, մեճիլիս կազմած, Ճ Խորմանքունցով
Մեր երգիշները, վիպասանները, Ն անոնի զօն ու
Գուսանները քաջ՝ ներշնչուած դէմքով,
Զահուած աշքերով: Յա ան մն վեյսից Ճ Խորմանք

Նրանք՝ շրջապատուած ուաս սցուն

Մեր արկածների դարերից եկած
Կսեմ շուրերով՝ վերակոչում են
Վեպեր փառաւոր և առասպելներ,
Որոնց խորաշունչ արձագանքները,
Դեռ մինչև այսօր,

Ողովայ ունաց րուն» Ի ողովանակ

Հայի ձեռքերով մշակուած դաշտերով, Յա ըն Ա Յ Ե Յ Յ
Հայի խորհուրդը պահող ձորերով, Յա մուած սոր
Երևելին հասնող լեռների գլխին Յա մաս Յ
Եւ սաղարթներում թաւ այգիների: Ողովուս Յ մ ն ա ւ ո ւ

Ամէն մի պահը լցում է յուշով Յ ա ն ա մ ա մ ի մ ա մ ա մ
Անցած օրերի: Աշքերիս առջև Յ ա ն ա մ ա մ ա մ ա մ
Անցնում են դանդաղ հերոսները մեր, ան ողմուն դու դ ա ս
Մեծի ստուերները հումկու քաջերի, Յ ա ն ա մ ա մ ա մ ա մ
Դից, աստուածների և՝ տիեզերը կերտող ս մ ց ո ւ ն չ պ ա ն չ պ
Հնչուն քայլերը առասպելների: Յ ա ն ա մ ա մ ա մ ա մ ա մ
Ո ւ ս ա ր դ յ ո ւ ս ա ր դ յ ո ւ

Երգը թնդում է:

Կոչունքի սրահը

Լցում է ծափ, որդան կարմիրի
Վառվուն գոյներով հագուած հինգերով Յ ա ն ա մ ա մ ա մ
Զրնգուն ու չխկուն զէնքերի ձայնով: Մ ա ս ա ր ա մ ա մ ա մ
Խողովաց արուն Ճ բողամ ս յ ա շ մ է մ ի
Ալ ալուան նախշուած մետաքսների մէջ Յ ա ն ա մ ա մ ա մ ա մ
Փաթաթուած կանայք, աշքերով հրաշէք, Ճ բոյսուդուն ընողի

Ժպտում են չորս կողմ և, շոյ ձեռքերով՝ դժուառը
Ակնազարդ շարուած սկիհներ են լցում նուռնս մժ գրսոյն
Շիրակայ բոցեղ, հրաշունց գինիով՝ օճառ նուռախանոր
Եւ մատուցում են յուզուած հիւրերին: յինսան ծարաբառ
Մինչ ես, երազկոտ, ծարաւ աչքերով, աօդին մ ուսոյն
Նայում եմ այդ հրաշը, մեծ տեսարանին - մնուրոց թմռո՛
Սարսուն պապուն մի նուրբ արարած՝ մյա նուռնս շ ոժի
Երկարում է ինձ բիւրեղ մի սկիհ

Լցուած գինիով.- «Ըմպի՛ր արիւնը ի նուռախանար զմին շ
Մեր այգիների, որպէսզի երգը ձմռար ճապակոց, ո մաս
Լիովեան բերքը սրտիդ բաժանի ուժը մ նուռն
Եւ յոյս վառի հազար մոմերով ու նուռն մաս նմ նուռն
Ներշնչումների»:

Եւ երբ խմում եմ -

Դահլիճի խորքից ասց շումնասուն
Յանկարծ հնչում է արծաթէ մի ձայն՝ մողեցա ճառածան
Մէջս տառապում: ասացոյ պայդ

5
նավի թիգեռար մոդմաննս ովն
մժ նուռնիանց նորուած նուռ
ոմնաւառա և դրասու ուրուն
«Թող բամբ լարերը ու անուն մաս մշնի ովն
Փանդիոի ու մաննունաւ ուրուն
Հնչեն և զնգան - մոցուցար ճառախնցի նորուած զան
Լոյս դառնան, ու մուս նուռն մուռն ուժուուս ուրուն
Սլանան՝ մուսու ուսուն, յուսուն մշցնի ովն
Նուաճեն աստղերը: ու անունիքար աստ նուռնիաւառաւ ովն

Երգե՛նք ձիւնաթագ և բարձրասանդուութք ու ցնայ ովն մաս
Մեր սեպ լեռները, ու առա ապուալ մոժո նորուն
Մեր խոր ձորերը, ժայռերը խոտոն, ու առուար մժ նուռնի
Եւ ժայռերի տակ՝ փեշը վեր հանած, ու գումարուու ուրուն
Արծաթ շմուշկը քարերին զարնոռ, ու մուսնաւու ովն
Կանչող, բղատող,
Թոշող գետերը:

Եւ նորմե որուն

Վիների նուագ:

Ով որ իր սրտի ճրագը վեր ցցած, առ նուռն մաս է նուռն
Չի անցել Հայոց աշխարհի վրայով - յո նուռն ու նուռնի
Ինչպէ՞ս կարող է հոգու աչքերով
Կարտալ գաղտնակերտ այն նշանները, առողման մասուա յի
Որոնց խորհուուի ներքին կըրուակը ու անուն ճառածան

Օծել է յամառ մեր ճակատները:

Ահա կանգնած է՝ վսեմ, լուսահագ՝
Հայոց աշխարհին տիրող Պարոնը -
Ազատը սրտով բիւրեղ և յստակ՝
Արարատ լեռը արևահաւաք:

Ուսերից կախուած ալ պատմուճանից
Ծալք ծալք երկինք է թափում դէպի վար
Եւ իր գագաթի ձիւնակոփ թագից
Ճառագայթում է վեհութիւն անառ:

Մեր հոգու հիմքում բարձրացած կոթող,
Նա յուշ է, կանչ է կախարդ և դիւթող -
Նա քրմապետ է, լուսթեան Մեծ Մոգ,
Աստղաշխարհի խուզարկու պահակ,
Ֆաւերով սնուած Տիտան մտահոգ,
Յոյսի սերմացան,
Հայոց հեքեաթի մշտահոս մի ակ,
Հայ ժողովրդի անմեռ ջահատար՝
Բնութեան հանճար»:

Սրահում թնդում են ծափեր անհամար:
Կանաց և մարդկանց յուզուած սրտերում
Փարթամ և շքեղ պարտէզ է ծաղկում՝
Բոցկլուում հրավառ:

-- Կեցցէ՛, ջան գուսան, մատա՛ղ խօսքերիդ:
Եւ հազար լարով հնչող քո սրտիդ:

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

Հատուած «Գիրք Դիւցազներգութեանց» անտիա հատորէն

Եկեղեցիներու Միութեան եօթնեսկիան
Երուսաղեմի Մէջ Յայ սաշազն

Քրիստոնէական գանազան եկեղեցիներու կողմէ հաստատուած և գովելի նախանձախնդրութեամբ մը շարանակուող այս սովորութիւնը —աղօթք՝ եկեղեցիներու Միութեան համար— այս տարի ևս գործադրուեցաւ 19-26 Յունուարի ընթացքին :

Դժբախտաբար կարգ մը եկեղեցիներ , իրենց վերապահուած պատճառներով , չուղեցին իրենց մասնակցութիւնը բերել գեղեցիկ այս շարժումին : Հայ եկեղեցին , որուն ժամանըրքին մէջ խոկ տեղ է զտած քրիստոնէական միարանութեան համար մատուցուած աղօթք-մաղթանքը , «Զի միարանեսցէ զեկեղեցի իւր սուրբ , չինեալ ի վերայ առաքելոց և մարգարէից . . . » , և որ ամենուրեք իր գովելի մասնակցութիւնը բերած է էքումէնիկ այս շարժումին , այս տարի ևս յանորէն իր բաժինը բերաւ անոր :

Հաւաքոյթներուն բացումը կատարուեցաւ կիրակի , 19 Յունուար , երեկոյեան ժամը 6ին , Անկլիքաններու Սէյնթ Ճօրծ եկեղեցիին մէջ : Անդյերէն և Գերմաններէն լեզուներով կատարուած Ս . Գրական ընթերցումներէ և աղօթքներէ ետք , մասնակցողներէն իւրաքանչիւրը իր լեզուով արտասանեց Տէրունական աղօթքը : Մեր կողմէ ներկայ էին Հոգչ . Տ . Վահան Վրդ . Թօփալեան :

Յաջորդ օր , երեկոյեան ժամը 5ին , Միոն լերան Տորմիսիոններու վանքի եկեղեցիին մէջ կատարուեցաւ նմանօրինակ հաւաքոյթ մը : Եղան գանազան լեզուներով Աւետարանական ընթերցումներ , որոնց ընթացքին եկեղեցիներու միութեան գաղափարին չուրջ խօսեցաւ Հուտերականներու Փրօփսիթք՝ Հէլմութ Շմիթ : Մեր կողմէ ներկայ էին Հոգչ . Տ . Վահան Վրդ . Թօփալեան , որ Փրանսներէն լեզուով աղօթք մը արտասանեց , խոկ ժառանգաւոր սաներ խմբովին երգեցին «Գովիեա Երուսաղէմ զՏէր» յարութեան մաղթերդը :

Երեքարթի երեկոյ , Բնեթղեհէմի կէս ճամբուն վրայ գտնուող թանթուրի էկումէնական կեղբոնին մէջ կատարուեցաւ նմանօրինակ աղօթաժողով մը :

Չորեքշարթի , 22 Յունուար , երեկոյեան ժամը 5ին , Ս . Յակոբեանց Մայր Տաճարը լեցուած էր արդէն գանազան համայնքներու պատկանող ամէն սեռէ ու տարիքէ անձնաւորութիւններով : Բացումը կատարուեցաւ Յունարէն «Հայր մեր»ով , արտասանուած Արքմանստրիթ Քօրնէլիոս Ռօտուսաքիսի կողմէ : Ասպա , ժառանգաւոր սաներ երգեցին պատարագէն հատուածներ , ինչպէս նաև Ս . Ծննդեան Հոգեզմայլ շարականներ : Քարլ Շմիտ սարկաւագի կողմէ Գերմաններէնով կատարուած Հոովմայնեցոց Թուղթէն ընթերցումէ ետք Հոգչ . Տ . Հայկակեր Վրդ . Պայրամեան արտասանեց Ս . Գրիգոր Նարեկացիի հոգեշունչ աղօթքը՝ «Որդի Ասուուծոյ կենդանւոյ» : Ֆրանչիսկիան միարանութեան անդամ և Լատին համայնքի Հովիւ Հայր Տոմինիք Փէքի Արարերէն լեզուով կարդաց Յովհաննու Աւետարանէն համարներ : Անկլիքան Արքեպիսկոպոսարտ-

նի Երէցներէն Հայր Քլայլ Հէնտֆըրտ քարողեց Անգլերէն լեզուով, չեշտելով եկեղեցիներու միութեան և քրիստոնեաներու. Համագործակցութեան անհրաժեշտութիւնը մանաւանդ 20րդ դարու նիւթապաշտ ու անկերպարան այս օրերուն: Ժառանգաւոր սաներ վերստին երգեցին Ս. Ծննդեան մեղեդիներ, որմէ ևտք Ֆրանչիսկեան Հայր Իկնաղիօ Մանչինի Ֆրանսներէն լեզուով տուաւ իր փակման օրհնութիւնը:

Շարաթ, 25 Յունուար Երեկոյեան, սոյն շարժման մասնակցողները համախումբ ազօթք ընելէ ետք Ս. Յարութեան Տաճարին մէջ, ներկայ եղան Գողգոթայի վրայ կատարուած Յունաց կիրակմուտքի յատուկ Հսկումի արարողութեան:

Կիրակի, 26 Յունուար, վերջին օրն էր ազօթաժողովներուն: Զոյդ Հաւաքոյթներ փակեցին եկեղեցիներու միութեան եօթնեակը: Առաջինը կէսօրէ տուաջ ժամը 11ին, Ֆրանչիսկեաններու վանքի եկեղեցին մէջ, ուր բիւղանդական ծէսով մատուցուեցաւ պատարագ, Յոյն Կաթոլիկ եկեղեցիի բարձրաստիճան հոգեորականներէն մէկուն կողմէ, որ խօսեցաւ միութեան սրբագան զազափարին չուրջ:

Երեկոյեան ժամը 4·30ին, Շմիթ աղջկանց վարժարանի ընդորձակ սրբակ լեցուն էր ամէնազգի բազմութեամբ: Ազօթաժողով մը ըլլալէ աւելի՝ Հաւաքոյթը կոչուած էր կրօնական Երաժշտութիւն մատուցանելու քրիստոնէական տարբեր դաւանանքներու պատկանող Երդչախումբերու կողմէ՝ ներկայ Հասարակութեան:

Հանդէսը բացաւ Գոլէճի Տեսուչը, որմէ ևտք, երկու մասերէ բաղկացած ընդարձակ յայտագիր մը զործադրուեցաւ, ուր, յաջորդարար բեմ եկան Ֆրանչիսկաններու, Յոյն Արքար Ս. Յակոբ եկեղեցիի, Աւետարանականներու, Յոյն Օրթոսոքներու և Սրբոց Թարգմանչաց Երկը. Վարժարանի, Լուտերականներու և Ֆրէքներու դպրոցի Երդչախումբերը: Բարչ. Հրանդ Սարկաւագ մէներգեց «Ընտրեալդ Աստուծոյ» իսկ Տիկ. Շաքէ Գալայճեան՝ «Ասւրք, Սուրբ»: Երեկոյթին մէծագոյն անակնկալը եղաւ Հապէչ Համայնքին մասնակցութիւնը: Երկու սարկաւագներ, մօտ քառորդ ժամ, ներկաներուն լարուած ուշագրութիւնը կեղքոնացուցին իրենց վրայ, իրենց եկեղեցին Երաժշտութեան ելեջներով:

Ս. Թարգմանչաց Երկսեռ Երդչախումբը հանդէս եկաւ ազդային երգեցով բուռն ծափահարութիւններ խլելով ներկաներէն, որոնք սրահէն մէկնեցան հոգեկան բաւարարութիւն ստացած մարդերու ուրախ հոգեվիճակով:

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

ՑՈՒՑԱԿ ԶԵՐԱԳՐԱՑ

ՅԱՐԹՖԵՐՏԻ ԱՍՏՈՒԱԺԱԲԱՆԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

Թիւ 10 (Հաւաքման Ա 195/207)

ԺՈՂՈՎԱԾՈՒԻ

Ծառալ՝ 11×16 սմ. : Գրչուրիւն՝ միասիւն, նոտրանման բոլորդիր, 22 տող : Զէ ծաղկուած : Նիւր՝ թուղթ : կազմ՝ կաշեպատ տախտակ, գրեթէ փճացած : Պահպանակ՝ սկիզբը երկու թերթ ցեցակեր մագաղաթ երկաթագիր : Վերջը երկու թերթ թղթեայ մանր և նուրբ շեղ երկաթագիր մը, Աւետարանի մաս : Պարունակութիւն :

Էջ 1ա. «Կիրակոս վարդապետի ի յազագս Լ(ութը) խորհրդոցն» : Մինչև էջ 43ա. ուր կը սկսի «Հարցումն երիտասարդին բնդ հայր ծերն և պատասխանիք նորին վասն խորհրդոց մտացն» : Կը շարունակուի հարց-պատասխան կրօնաւորի և Ամիրայի միջև : Կաւարտի այսպիս . «Ես Բարդողիմէոս Հայոց թաղաւորի որդի ի ծննդարանութենէ Արուսահետ կոչեցեալ . ի ժամանակի բարկութեան իրոյ յորժամ ծովացեալ մեղքն ընկղզեցին զիս որ մատնեցայ ի բանդ և ի կապանս թարգմանեցի զշահաւեկտ պատմութիւնս ի Տաճիկ գրոց, որք կարգայք և աւրինակ առնոյք յիշեսջիք զիս ի քրիստոս յիսուս ի տէր մեր յորում փառք յախտեանս ամէն» :

Էջ 128ա. «Պատմութիւն Հերակլիոսի թագաւորի Յունաց վասն զտանելոյ սուրբ Խաչին» : Կաւարտի էջ 161բ., որմէ վերջ պարապ մինչև 164բ. :

Էջ 165ա. «Առւրոր հաւրն մերոյ Մեթաւտիու Պատրօնի ու եպիսկոպոսի ի մեկնութենէ Դանիէլի մարդարէին, զոր արար յետ բանից իւրաց ի մեկնութենէ տեսլեանն չորից հոզմոցն և չորից զազանացն ըստոյդ պատմութիւն չորից ինքնակալ թագաւորաց : Եւ վասն տիրելոյ Հեթանոսաց և յետին ժամանակին և նեղութեանց որ լինելոց է և վասն թագաւորացն որ փոխադրեցան . և վասն Պալտեանն քրիստոսի աստուծոյ մերոյ» : Կը վերջանայ էջ 198ա. «Վասն չար և պիղծ Նեռին լիակատար պատմութիւն թէ ուղենաս ի ներքի թուխոր տես յառաջիկայդ . զի այդ աւրինակն յետն դտաք մի մեղագրէք, և զրիս մի մեղաղիք լինիք, զի կարս մեր այսչափ էր թէ յիշելոյ արժանի չեօք, բայց զուք ներեցէք և յիշելոյ արժանի արարէք և յիշեցէք զմեղաւոր զծոզս զյԱնդրէասս և թողութիւն մեղաց խնդրեցէք ասելով Հայր մեր որ յերկինս և տէր Յիսուս Քրիստոս զձերն թողու : Բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնին ամէն» :

Էջ 198բ. կարմրաւ . «Ազագոնի անյաղթ փիլիսոփայի ասացեալ պատմութիւն վասն բարի ժամանակին զաւրանալոյ աղդին Հայոց և վասն աղդին նետողաց կործանման և վասն սուրբ թագաւորացն որ յայտնելոյ են ի զարմից նոցա յերկիրն Հոռմայ և նոր կոստանդիանոս անուանի, յորոյ ձեռն փրկութիւն լիցի ամենայն Քրիստոնէից : Եւ զարձեալ վասն ի Դ(չորս) թագաւորացն

որս յարձակելոց են իրր և զշար և զարիւնարրու գամգանս և տողականելոց են զերկիրն , որ են Բաճուճք և Թուշանք և կոչին Լիկք : Եւ վասն պիղծ և անմաքուր Նեռին որ յայտնելոց է և զարձեալ կործանելոց է զաւրութեամբ սուրբ խաչին : Եւ վասն անեղ և սոսկալի դալստեան որդոյն Աստուծոյ , և հատուցման արդարոց և մեղաւորաց» :

Էջ 222ր . կարմրաւ . «Յաղագս նաւակատեաց խաչին» :

Էջ 222ր . «Մինսասայ սքանչելեացն որ յետոյ եղեն» :

Էջ 233ա . կէսին գրչեն յիշատակութիւն . «Տէր Յիսուս ողորմեայ մեղապարտի ասրկաւագի յԱնդրէասէ և կարդացողաց և լողացդ հաւասար ամէն» : Յետոյ կարմրաւ . «Յաղագս սուրբ հայրապետացն» :

Էջ 241ր . «Յաղագս սուրբ Մարտիրոսացն» :

Էջ 250ր . «Յաղագս գիւտի սուրբ խաչին» : Կաւարտի «Եւ գործեցաւ այս ի թագաւորելի ի Յունաց երրորդ կոստանդինայ որ էր թոռն Հերակլ յաւուրս յորում ունէր զմարծպանութիւն Հայոց կոստոկ , և էր զաւրավար Հայոց հրամանաւ կայսեր . քաջն թէոդորոս Բոշտունեաց տէրն և Վարդ Պատրիկն նորին որդին , ի հայրապետութեան Ներսէսի շինողի Հայոց կաթողիկոսի , յորում էր թուականութիւն Հայոց Ճ (651)» : Կարմրաւ . «Յայլումն յաւրինակէ է յետե գտայ և գրեցի ի կատարեալ պատմութիւնէ ըստոյդ դիւտ խաչին» : Թերք 257 և 264 մազաղար :

Էջ 264ա . կարմրաւ , «Վասն կրկին թագման սուրբ խաչին ի Հրէիցն և երկրորդ դիւտին Հեղինայ տիկնոջն ձեռամբ Յուղայի» : Կաւարտի «Քրիստոս Աստուած քարեխաւութեամբ սուրբ նշանին ողորմեայ Անդրէաս մեղաւոր գրծողին և աշխատողին» : Հոս կը սկսի «Սրբոյն կիւրդի երաւաղէմի հայրապետին , վարք և վկայութիւն նորին» : Թերք 269 , 276 , 281 , 288 մազաղար :

Էջ 286ր . «Մովսէսի Խորենացոյ ասացեալ պատմութիւն վասն սրբոյ Հոխիսիմեայ թէ ուստի կամ որպէս» :

Էջ 295ր . «Թէ վասն էր զկնի աստուածայայոնութեան աւուրն զիշտառակ Պետրոսի և Արքոսողոմայ աւանէ եկեղեցի , և զկնի ի զմեծին Անտոնի և ապայ զթագաւորին թէոդորի» : 300 , 305 , 312 և 317 թերքերը մազաղար :

Էջ 300ա . «Վասն չարաթի և նորին խորհրդի» : Էջ 306ա . «Անանիայ վարդապետի ասացեալ յաղագս Յովհաննու Մկրտչի» : Կաւարտի Էջ 321ա . ուրկէ մինչև Էջ 322ր . պարապ : Տակը գրչէն՝ «Պատմութիւնն եկեղեցւոյ է յառաջն ի յաւրինակն թուիւտ էր անկեալ» : Թերք 323 , 331 և 332 մազաղար են :

Էջ 335ա . «Նորին և այլ վարդապետաց ասացեալ ի խորհրդուրդ սուրբ եկեղեցւոյ» : Մազաղար են թերք 341 , 346 , 353 և 356 :

Էջ 342ա . «Յովհաննէս իմաստասէր Հայոց կաթողիկոսի յաղագս միաշարաթի» :

Էջ 344ա . «Կարդ մեկնութեանց ժամու աղաւթից» : սոյսան ուժան պայման Յիշատակարան կը պակսի , որով տեղ , ժամանակ , գրիչ կը մնան անձանօր :

Մատալ՝ 11×16 սմ . : Գրչուրին՝ նոտրադիր և բոլորդիր խառն , 17 տող : Նիւր՝ թուղթ : Կազմ՝ կաշեպատ խաւաքարտ : Զէ ծաղկուած : Համգամանի՝ լոււ :

Սկիզբի երեք քերքերուն վրայ, 17 տող էջին, նոտրգիր տաղաչափ-եալ Ա. Գրոց պատմութիւն։ Իլ յաջորդէ «Պատճէն Հայոց տոմարխ» , բալոր-գիր, նոյնպէս 17 տող : Էջ 13ա . պարապ : Յետոյ «Պատճէն Հռօմայցոց տօմարին» : Էջ 20ա . «Այս է ամենայն տնօրինականք տեառն մերոյ Յիսուսի Քրիստո-սի ի սուրբ և աստուածաբնակ մայրաքաղաքն յԵրուսաղէմ որք կան հաւաքեալ աստ ի թողութիւն մեղաց» Ան . Ասիկա հրատարակեցի Սիոնի մէջ (1971, թի 5—6, էջ 146—151) :

Էջ 21ր . «Վասն Յակոբայ նահապետին, և վասն ծննդեան Յովասափայ և տեսանելոյ զերազն և պատմել հօրն և եղբարց» յանգաւորեալ : Կը հասնի էջ 41ա ., ուր կայ սա վերջաւորութիւնը .

Եղեւ վճար բանիս այս ներբողական,
Յակոբայ Յովսեփայ և եղբարցն ամենայն,
Կարգաւ ըզգատմութիւնըն վկայական
Դիւրահաւոն մանկանց նոր ուսումնական :

Ի Հայոց տուժարի հազար թուական
Ինընսուն և մին յարաբարզեալ կան . (1642)
Տաղաչափ շինեցաւ բանըս պատմաբան,
Ոչ յինքինէ մըոտաց այլ գրոց ծնընդեան :

Ի կըզզիս Վէնէտիկ ծով անստական
Ղարիպութիւն յերկիրս ի Ֆռանդստան,
Այն որ Յովսէփ հասուց փառք և իշխանութեան
Հասցնու զամէն դարիպ իւր նաւահանդստեան :

Նուաստ յոդի Աստուածատուր անարժան,
Որ ըսկիզբն բանիս և ես կատարման .
Լալով զձեղ աղաչեմ ընթերցողք սրբազան .
Որք լի սրտիւ ասէք վասն իմ գհայր մեղան :

Փառք քեզ հայր և որդի հոդիդ չնորհական,
Որ տաս զհայացուածք սրտի որք առ քեզ կարդան,
Պարտիմք վեր առաքել փառ անլուական,
Ցանձեալ այժմոյ յաւետ յաւիտենական :

Էջ 42ա . «Ռտանաւոր սրբոյն Մարիայ և Կոսփարայ . Զոր արարեալ Յակոբ եպիսկոպոս յԱրքակոյ քաղաքէ» : 46 տուն :

Էջ 47ր . «Դեղ աչաց» ևայլն, բժշկական : Շահեկան :

«Դեղ աչաց, լաւ և ընտիր :

«Առ հուզապի թութիւյ, և պահի թութիւյ, և քիրիծ թութիւյ և մարգրիտ սպիտակ որ ճուհարով լինի, լալ ակին կըտոր, ոսկոյ և արծաթոյ խլմայ . Այսոցս պարապար՝ արծուոյ լեղի, բուր լեղի, կուրնկոյ լեղի, կէս տրամ Փուանկի դահնայ, կէս տրամ աղբերաց արիւն Գ(3) տրամ զամէնդարի չորէշ լուսէ, և շարով մաղէ, և յիրար խառնէ, և աչքն որ չիք լինի, աւուրն Բ (երկու) հետ զգեն . բացուր աչքն կամաւն աստուծոյ : Այլ զդարեսնուն տակըն դեղ դիր լուգէ, և ամէն այգուց և յերեկուն դատարկ աչքն քաշէ :

«Այլ որ կծոյ և քորի : Առ կանանչ թութիւյ . և լից ի վերայ աղոյ

ջուր, այնչափ որ փշրակ լինի, և տէր ի շուքն որ չորնայ, և դարձեալ փշրէ, և այլ արկայն աղոխ ջրեն, Գ(երեք) հետ և ապայ լոսէ և ի շաբն մաղէ և աչքն դիր :

«Աչքն որ ուսենայ. աղչկան մօր կաթ եսցու՝ և Հովացոյ. խառնէ և բամպկով ի վերայ դիր :

«Աչքն որ շաղ ունի. քօչու կամ հորթու լեղի ձագուց մեղրով ի վերայ դիր :

«Բոլիկ զնալն զեն է, քրտինքն որ աչքն մտանէ զեն է: Մանանեխն, և սխորին հոտն զեն է: Կաղնի մուխն, պղտոր գինին, շատ խաղող ուտելն զեն է: Եւ ամենայն միրգ ատամանց և աչիցն զեն է: Եւ ամենայն ինչ որ մաղաս ծընանի աչացն զեն է: Եւ ախորժակ անէ ամէն քաղցր կերակուր :

«Աչքն որ մաղաստ ցաւի, կամ այլ ինչ ցաւ է, առ անծակ զղթոր մի աղայ և մաղէ և ի պախուն ճրակուն խառնէ, և ի վերայ աչացն դիր լաւ է:

«Այլ գհաւեկթի դեղնուցն. և գվարդի եղն յիրար խառնէ, և ի վերայ կաղամպի տերեւին հան, և ի վերայ դիր :

«Այլ առ սե այծու կաթն. և թիրուքամ արայ, և բամկով ի վերայ աշացն դիր :

«Այլ առ կծայ. կամ իրք լինի դիպիլ և կարմրիլ. աղաւնոյ արիւն կաթեցու :

«Այլ աչքն որ փաք անկանի և ունենայ զառին թոք առ և շողողի ի վերայ դիր :

«Այլ աչքն որ լոյս պակաս տեսնու. զվայրի զաղձն չորցու. և լոսէ խիստ և դեղ զրով աչքն դիր սրատես առնէ :

«Այլ զհում մեղուն և Դ(չորս) կաքին լեղին, կրեայի արիւն կաթեցոյ աչքն :

«Այլ առ հուլպայ և լուայ, և ջրով եփէ խիստ՝ և հում մեղրով շաղէ և աչքն դիր :

«Այլ զարագըլոյ ծիրան ջրով խառնէ, զյոյսն սուրբ պահէ :

«Այլ առ կնդրուկ. և խունկ և խիստ լոսէ. և աչքն դիր :

«Այլ աչքն որ թանձըրնայ կոսկն և կարմրի. փոքր մանկան մեղն ի հում մեղրն խառնէ և աչքն դիր :

«Աչքն որ արամ տրամ անցնի անկղի լեղի դիր աչքն. խիստ սրբէ :

«Այլ սե ձիոյ լեղի դիր. զաչքն սրբէ յամենայն յաղտէ. և յամենայն դիմութենէ :

«Այլ կարմիր սոխի ջուր դիր. քաջատես առնէ :

«Այլ սե այծու լեղի. և բուի լեղի յաչքն դիր լաւ է :

«Այլ զրողիանի ջուրն կաթեցոյ սուր առնէ :

«Այլ զքարառոսի ջուրն կաթեցոյ :

«Այլ զդիծուն լեղին կաթեցոյ :

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ



Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ — ԲԵՄԱԿԱՆՔ

* Ծր. 4 Յուն.— Ա. Բարսի Հայրապետին: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Գլխադրի մատուին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Աղան Վրդ. Պալիօզեան:

* Կիր. 5 Յուն.— Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Աստուածածին խորանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Նորիկան Վրդ. Մանուկեան: Ա. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի ուսանողութիւնը Մ. Հադրութիւն ստացաւ:

Կէսօք ետք սկսան Ա. Ծնունդը կանխող աւագ տօները, որոնցմէ առաջինին՝ Դարի մարգարէին և Յակոբայ Տեառներօր հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ շրեղորէն զարդարուած Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Ա. Հօր: Արարողութեանց աւարտին, Միաբանութիւնը «Օրինեցէք զՏէր» Ա. Աթոնի շարականը երգելով թափօրով բարձրացաւ Պատրիարքարան:

* Բշ. 6 Յուն.— Ա. Դարթի մարգարէին և Յակոբայ Տեառներայր առաքելոյն: Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան ընթացքին, Ամեն. Պատրիարք Ա. Հայրը ըգգեստարուած բարձրացաւ Տեառներօր Աթոնի պատուանդանին, որ մնաց մինչև ժամերգութեան աւարտը և ընդունեց Միաբանութեան շնորհաւորութիւնները՝ Առաքելական Ա. Աթոնու տօնին առթի: Հանդիսաւոր սուրբ պատարագը Աւագ Անդանին վրայ մատույց Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Ամէմեան և քարոզեց օրուան տօնելի սուրբերուն մասին՝ զանոնք ներկայացնելով իրեն անձնազնութեան սրանչելի տիպարներ: Ապա, Լուսա-

րարապետն Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի նախագահութեամբ կատարուեցաւ, ընկալեալ սովորութեան համաձայն, հոգինագուեան հանդիսաւոր պաշտօն՝ Ա. Աթոնոյ հանգուցեալ պատրիարքներու հոգիներուն համար:

— Ա. Ստեփանոսի հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, գրխաւորութեամբ Ամեն. Պատրիարք Ա. Հօր: Տօնին բորբակակիր վարդապետները էին Հոգ. Տ. Նորիկան Վրդ. Մանուկեան և Հոգ. Տ. Խաժակ Վրդ. Պարսամեան:

* Գշ. 7 Յուն.— Ա. Ստեփանոսի նախավըլկային: Ա. Աթոնոյ երկու սարկաւագները ու չորս ուրարտակիրները, գանձատան թանկահին շապիկներով և սաղաւարտներով զգևստաւորուած, պանծացուցին լիշտակը իրենց մտահապարին, կատարելով ժամերգութեան վերջին բաժինը: Արարողութեան կը նախագահէր Ամեն. Պատրիարք Ա. Հայրը: Ապա մատուցուեցաւ սուրբ պատարագ՝ Մայր Տաճարի աւանդաւոն Ա. Ստեփանոս մատուին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

* Դշ. 8 Յուն.— Գլխաւոր առաքեալներու՝ Պետրոսի և Պողոսի նախատօնակը հանդիսաւորապէս պաշտուեցաւ Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպուն Ասլանեանի:

* Եշ. 9 Յուն.— Ա. Առաքելոցն Պետրոսի և Պողոսի: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Պետրոսի վերնամատուին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Խաժակ Վրդ. Պարսամեան:

* Ըլր. 10 Յուն.—Կէսօրէ եաք ժամը 2.30-ին, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յակոբեանց Մայր Տաճար, որ նախագահեց Որդոց Որոտման տօնի մեծահանդէս նախատօնակին: Արարողութեանց աւարտին, Ս. Աթոռի շարականի երգեցողութեամբ, Միաբանութիւնը Պատրիարքարան բարձրացաւ:

* Ըլր. 11 Յուն.—Տօն Ս. Որդոցն Որոտման, Յակոբայ առաքելոյն և Յովհաննու Աւետարանչին: Բարեկենդան Ս. Ծննդեան պահոց: Օրուան հանդիսաւոր սուրբ պատարագը՝ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատուռին մէջ մատոյց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը և ապա, ամպհովանիի ներքև և Ս. Խաչափայտի մատուռը ի ձեռին, նախագահեց երադարձ մեծահանդէս թափօրին: Արարողութիւններու աւարտին, Միաբանութիւն և ժողովուրդ Ս. Աթոռի շարականին երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, որ Ն. Ամենապատութիւնը նշանակեր բաժնեց բոլորին, իմակենով շարքը աւագ տօններուն:

* Կիր. 12 Յուն.—Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցին մէջ: Ժամարարն որ Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պայեան:

* Գշ. 14 Յուն.—Նոր Տարի - 1975 - ըստ Հին Տոմարի: Կէս գիշերին՝ Մայրավանքի մեծ զանգը ուրախ զանգիններով կ'աւետէր Նոր Տարին: Առողջուն, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցուեցաւ սուրբ պատարագ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտարեան: Ապա, Ս. Աթոռի շարականին երգեցողութեամբ, Միաբանութիւն և ժողովուրդ բարձրացան Պատրիարքարան, որ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս: Ի դիմաց Միաբանութեան և ժողովուրդին՝ Ամանորի իր շնորհաւորութիւնները ներկայացուց Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հօր, ընելով հանդերձ բարեմաղթութիւններ անոր արևատուրեան համար: Ս. Թարգմանչաց Վարժարանէն փոքրիկ մը խնամուած ուղերձով իր և իր ընկերներուն երախտագիտական զգացումները ներկայացուց Պատրիարք Ս. Հօր, նուիրելով յետոյ ծաղկեւինաց մը: Ամենէն ետքը խօսք առաւ Ն. Ամենապատութիւնը, որ աւոր պատշաճի խօսքերէ և պահէն թելադրուած մտածումներու արտայալստութեանը

եւր շնորհաւորեց բոլորը և մէկական նարինց բաժնեց: Յովհաննու ծառը ծառը

* Բշ. 20 Յուն.—Յիշատակ մեռելոց: Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Աւագ Թարգման Հոգ. Տ. Գեղարդ Վրդ. Նազարեան: Ապա կատարուեցաւ հոգինանգատեան պաշտօն՝ նախագահութեամբ Հոգ. Տ. Կիրիկ Ռ. Վրդ. Գարիկեանի:

* Ըլր. 25 Յուն.—Է. օր Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին ձախակողմը գտնուող Ս. Աստուածածինի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Հայկասէր Վրդ. Պայրամեան:

— Անուանակոչութեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Շահէ Արք.:

* Կիր. 26 Յուն.—Տօն Անուանակոչութեան Տեան: Առաւոտուն, Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս: Անէնեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, որ Գերշ. Արքազանը մատոյց օրուան հանդիսաւոր սուրբ պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, որը ձայնափոռուեցաւ իսրայէլեան ուստիկայանէն: Վանք վերադարձին, Հայոց Թաղի մուտքին, «Ելու ի լուսոյ» շարականի երգեցողութեամբ, Միաբանութիւնը յառաջացաւ և բարձրացան Պատրիարքարան, որ Ամեն. Պատրիարք Ս. Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Տնօրինէք»ի արարողութիւն և օրինուեցան Ս. Աթոռին բարիքները: Ապա, փոքր թափօր մը, Հոգ. Տ. Գեղարդ Արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ, նոյն արարողութիւնը կատարեց, թափօրական զնացրով, վանքի սեղանատան, խոհանոցին, մառանին և փունին մէջ:

— Յովհ. Կարապետի ծննդեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Հոգ. Տ. Կիրիկ Ռ. Վրդ. Գարիկեան:

* Բշ. 27 Յուն.—Տօն Ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին: Ս. պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին աջակողմը գտնուող Ս. Յովհ. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Աղան Վրդ. Պայիօզեան:

* Ըլր. 1 Փետր.—Ս. Թէոդոսի թագ. և 7 մանկանց Եփեսոսի: Ս. պատարագը մա-

տուցուեցաւ **Ս. Գլխադիր:** Ժամարարն էր Հոգ. **Տ. Ալան Վրդ. Ղարիպեան:**

* Կիր. 2 Փետր.— **Ս. Պատարազը մատուցուեցաւ **Ս. Յակոբ:** Ժամարարն էր Հոգ. **Տ. Աղան Վրդ. Պալիօզեան:****

* Ծր. 8 Փետր.— **Ս. Հայրապետացն՝ Արանասի և Կիրդի:** **Ս. պատարազը մատուցուեցաւ **Ս. Գլխադիր:** Ժամարարն էր Հոգ. **Տ. Ալան Վրդ. Ղարիպեան:****

* Կիր. 9 Փետր.— **Ս. պատարազը մատուցուեցաւ **Ս. Յարութին, Ս. Լուսաւորիչ Եկեղեցին մէջ:** Ժամարարն էր Հոգ. **Տ. Գեղարդ Արդ. Տառնուլարեան:****

* Ծր. 15 Փետր.— **Ս. Գրիգորի Աստուածարանին:** **Ս. Պատարազը մատուցուեցաւ **Ս. Գլխադիր:** Ժամարարն էր Հոգ. **Տ. Վահան Վրդ. Թօփալեան:****

* Կիր. 16 Փետր.— **Ս. պատարազը մատուցուեցաւ **Ս. Յակոբ:** Ժամարարն էր Հոգ. **Տ. Ալան Վրդ. Պալիօզեան:****

* Ծր. 22 Փետր.— **Ս. Որդուց և Թոռաց Գրիգորի Լուսաւորչին:** **Ս. Պատարազը մատուցուեցաւ **Ս. Գլխադիր:** Ժամարարն էր Հոգ. **Տ. Ալան Վրդ. Ղարիպեան:****

* Կիր. 23 Փետր.— **Բարեկենան Առաջարի պահոց:** **Ս. պատարազը մատուցուեցաւ **Ս. Հռեշտակապետ:** Ժամարարն էր Հոգ. **Տ. Ալան Վրդ. Պալիօզեան:****

* Դշ. 26 Փետր.— **Տեառնընդառաջի հանդիսաւոր նախատօնակին և անոր յաջորդող «Անդատան»ին նախագահեց Հոգ. **Տ. Կիրեղ Ը. Վրդ. Գարիկեան:****

— Գիշերավակիցին, **Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեսցէ»ի և Հսկման արարողութիւններուն նախագահեց Հոգ. **Տ. Վահան Վրդ. Թօփալեան:****

* Եշ. 27 Փետր.— **Տեառնընդառաջ:** **Մայր Տաճարի Ալագ Սեղանին վրայ սուրբ պատարազ մատուց Հոգ. **Տ. Վահան Վրդ. Թօփալեան:****

* Որ. 28 Փետր.— **Ցիշատակ Յովնանու մարգարեին:** **Առաւուեան ժամերգութեան աւարտին,** **Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ ընթերցումը Յովնանու մարգարեւութեան գրքին:**

— **Ս. Սարգսին նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Հոգ. **Տ. Վահան Վրդ. Թօփալեան:****

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

* Եշ. 26 Դեկտ.— **Ելրոպական Ս. Ծննդին տօնին առթիւ, կէսօրէ առաջ, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ընկերակցութեամբ Միարանութեան անդամներուն, շնորհաւորական այցելութեան գնաց Ֆրանչիսկան Գերշ. Կիսաթուին և Լատիններու Ամեն. Պատրիարքին: Ապա, ընկերակցութեամբ Հոգ. Հայրերու այցելեց Հայ Կաթոլիկ և Մարոնի համայնքներուն մեծաւորներուն, ինչպէս նաև Լուտերականներուն Երեցներուն:**

* Դշ. 8 Յուն.— **Օրթոսորս Եկեղեցիի Ս. Ծննդին տօնին առթով, կէսօրէ առաջ, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ընկերակցութեամբ Միարանութեան անդամներուն, շնորհաւորական այցելութեան գնաց Յունաց Ամեն. Պատրիարքին: Խոկ Գերշ. Տ. Չահէ Արքայիկոպոս, Հոգ. Հայրերու ընկերակցութեամբ, այցելեց Սատրիններու և Հապէջներու Եպիսկոպոսներուն:**

* Եշ. 16 Յուն.— **Քրիստոնեայ Համայնքներու Գործերու նոր տնօրէն Տիար Ռեուլէն Քական, ընկերակցութեամբ իր օգնական Տօքը. Միխայիլ Քլայնի, այցելեց Ամեն.** Պատրիարք Ս. Հօր:

* Բշ. 20 Յուն.— **Մեր Ս. Ծննդին տօնին առթիւ, կէսօրէ առաջ, յաջորդարար Պատրիարքարան այցելութեան եկան՝ Լատինաց Ամեն. Պատրիարքը, Յոյններու Պատր. Փոխանորդը, Ֆրանչիսկաններու Գերշ. Կիսաթուը և Հապէջներու Եպիսկոպոսը, իրենց Միարանութեան անդամներով, Ամենայի Արքայիկոպոսի Տեղական ու Արար Ամենայի Եկեղեցիի պետը, Հայ Կաթոլիկ և Մարոնի համայնքի մեծաւորները, Լուտերականներու և Արար Լուտերականներու Երեցները, ինչպէս նաև քաղաքին հիւպատոսական կազմը, Քաղաքապետը, Նահանգային Կառավարիչը և Կրօնից Նախարարութեան ներկայացուցիչը:**

* Ծր. 25 Յուն.— **Պապական Գերշ. Նուիրակը և Յունական ընդի. հիւպատոսը նոյն առիթով շնորհաւորութեան եկան Պատրիարքարան:**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամեն. Ս. Պատրիարք Հօր Պատգամը		
Բեթեհեմի Սուրբ Այրէց	2	
Տօնակատարութիւն Սուրբ ԾԱՇԽԵԱՆ	4	
 ԴԻՒԱՆ Ս. ՏԵՂԵԱՅ		
Տեղեկագիր	8	
ԾՕՆԵՆԴԸ և Աստուածայայտնութիւնը		
Երոսադէմի Եկեղեցին մէջ	18	
 ԲԱՆԱՏԵՂՋԱԿԱՆ		
Ծնունդի Գիշեր	9. ՃԱՐՏԱՐ	27
Տրտում Խոհեր	9. ՃԱՐՏԱՐ	27
 ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ		
Տեսական Աստուածաբանութիւն	ՄԱՂԱՔԻԱ ԱՐԵՊԱ. ՕՐՄԱՆԵԱՆ	28
 ԳՐԱԿԱՆ		
Գիրք Դիւցազներգութեանց	ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ	32
Եկեղեցիներու Միութեան Եօթնեակը		
Երոսադէմի մէջ	39	
 ԶԵՂԱԳՐԱԿԱՆ		
Ֆուցակ Զեռագրաց Հարթֆըրտի		
Աստուածաբանական Ճեմարանի	Յ. ՔԻՒՐՏԵԱՆ	41
 Ս. ՑԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ		
Եկեղեցականք - Բեմականք	44	
Պաշտօնականք	46	
Բովանդակութիւն	47	

C O N T E N T S

Message of His Beatitude the Armenian Patriarch from the Church of Nativity	2
The Christmas Festivities	4
BUREAU OF HOLY PLACES	
Report on the agreement between the three Patriarchates in Jerusalem	Rev. Guregh Kapikian 8
Christmas and Epiphany in the Church of Jerusalem	Chaim Wardi 18
POETRY	
Christmas Eve	K. Jardar 27
Sad thoughts	K. Jardar 27
THEOLOGY	
Rudiments of Theology	Archbp. Maghakia Ormanian 28
LITERATURE	
Book of Epics	Gosdan Zarian 32
The Ecumenic week of prayer in Jerusalem	39
MANUSCRIPTS	
Catalogue of Manuscripts of the Hartford Theological Seminary	H. Kurdian 41
Monthly news from the Armenian Patriarchate	44
Contents	48

Yearly subscription: 10 U. S. Dollars

All correspondence should be addressed to:

Ara Kalaydjian, The St. James Press

P. O. Box 14001, Jerusalem — Israel